

Հավելված N1  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
մարտի 19-ի N 596 - Ն որոշման

## Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում բնակելի, հասարակական, արտադրական նշանակության օբյեկտների ու դրանց համալիրների կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Կառուցապատման նպատակով թույլտվությունները և այլ փաստաթղթեր տրամադրվում են երեք հաջորդական փուլերով՝ նախագծման թույլտվություն (կամ ճարտարապետահատակագծային առաջադրանք), շինարարության թույլտվություն և շահագործման թույլտվություն (կամ ավարտված շինարարության շահագործման փաստագրում), եթե սույն կարգով այլ բան նախատեսված չէ:

3. Կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման ընթացակարգերը և դրանց հետ փոխկապակցված գործառույթները տարբերակվում են՝ կախված օբյեկտի ռիսկայնության աստիճանից՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

## II. ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Սույն կարգում օգտագործվել են հետևյալ հասկացությունները՝

1) **բազմակի օգտագործման օրինակելի նախագծեր**՝ քաղաքաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի կողմից կիրարկման մեջ դրված ճարտարապետաշինարարական նախագծեր, որոնք կարող են օգտագործվել տարբեր կառուցապատողների կողմից՝ իրենց ցանկությամբ.

2) **երաշխավորագիր**՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ նախագիծը թողարկող կամ շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագիր.

3) **իրավասու մարմին**՝ կառուցապատման նպատակով թույլտվություններ և այլ փաստաթղթեր տրամադրող այն համայնքի ղեկավարը (Երևան քաղաքում՝ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև վարչական շրջանի ղեկավարը), որի վարչական սահմաններում է գտնվում կառուցապատվող անշարժ գույքը (հողամաս, շենք, շինություն).

4) **ծանուցում**՝ դիմողին (հայտատուին) պատշաճ ձևով ներկայացված (էլեկտրոնային համակարգի միջոցով առաքված կամ ստորագրությամբ առձեռն հանձնված, կամ պատվիրված նամակով ուղարկված) տեղեկատվություն.

5) **կառուցապատման թույլտվություններ և այլ փաստաթղթեր**՝ քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով իրավասու մարմնի կողմից կառուցապատողին տրվող թույլտվության փաստաթղթերի համակարգ՝ ներառյալ նախագծման թույլտվությունը (կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքը), շինարարության թույլտվությունը և շահագործման թույլտվությունը (կամ ավարտված շինարարության շահագործման փաստագրումը).

6) **կառուցապատման (ծավալատարածական) չափորոշիչներ՝** համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերով ամրագրված պահանջներին համապատասխան՝ կառուցապատման բնույթն ու օգտագործման աստիճանն արտահայտող համակողմանի ցուցանիշներ (կառուցապատման խտության գործակից, շենքերի ու շինությունների բարձրություն, կառուցապատված, կանաչապատ մակերեսների հարաբերակցություն և այլն)։

7) **կառուցապատող՝** քաղաքաշինական գործունեություն իրականացնող՝ անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունք ունեցող անձ։

8) **համայնքի տարածական պլանավորման (կամ քաղաքաշինական ծրագրային) փաստաթղթեր՝** համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծ և քաղաքաշինական գոտևորման նախագիծ։

9) **հիմնական (կապիտալ) շենք, շինություն՝** երկարատև շահագործման համար նախատեսված և հողի հետ անխզելիորեն կապակցված՝ վերգետնյա ու ստորգետնյա (կամ միայն ստորգետնյա) կառուցվածքներ ունեցող շինարարական օբյեկտ, որի տեղափոխումն անհնարին է՝ առանց անհամաչափ վնաս հասցնելու այդ օբյեկտի կամ դրա մասերի ամբողջականությանն ու հողի ծածկույթին։

10) **ճարտարապետական մրցույթ՝** կառուցապատման լավագույն լուծումների ընտրության նպատակով կառուցապատողի կողմից հայտարարվող ճարտարապետական հրապարակային մրցույթ, որի անցկացման միջոցով ձեռք է բերվում օբյեկտի նախագծային փաստաթղթերի մշակման իրավունքը։

11) **մասնագիտական եզրակացություն՝** պատմամշակութային հուշարձանների պահպանության և օգտագործման, քաղաքաշինության և ճարտարապետության, առողջապահության (սանիտարահիգիենիկ փորձաքննություն), հրդեհային և տեխնիկական անվտանգության, տրանսպորտային անվտանգության և այլ ոլորտների՝ օրենքով նախատեսված դեպքերում պետական կառավարման համապատասխան լիազորված մարմինների կողմից տրվող եզրակացություն։

12) **մատակարար կազմակերպություններ՝** ինժեներական սպասարկում իրականացնող՝ ջրամատակարարման և ջրահեռացման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, հեռահաղորդակցության ոլորտներում սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպություններ.

13) **նախագծման թույլտվություն կամ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝** փաստաթուղթ, որը սահմանում է քաղաքաշինական գործունեության տվյալ օբյեկտին ներկայացվող նախագծման պարտադիր պահանջները, պայմաններն ու սահմանափակումները.

14) **շահագործման թույլտվություն կամ ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտ՝** փաստաթուղթ, որը հավաստում է ավարտված շինարարական օբյեկտի (շենքեր, շինություններ, դրանց վերակառուցում, վերականգնում, ուժեղացում և բարեկարգում)՝ դրա գործառնական նշանակությամբ շահագործման իրավունքը.

15) **շինարարության (տեղադրման) թույլտվություն՝** փաստաթուղթ, որը հաստատում է կառուցապատողի՝ ինչպես նոր կառուցապատման նպատակով սահմանված կարգով տրամադրված հողամասում, այնպես էլ՝ գոյություն ունեցող շենքերում և շինություններում որոշակի շինարարական գործունեություն իրականացնելու կամ ոչ հիմնական շինություն տեղադրելու իրավունքը.

16) **ոչ հիմնական շինություններ՝** առևտրի, սպասարկման, կենցաղային և այլ նպատակներով օգտագործվող շինություններ, որոնք տեղադրվում են հողի մակերեսին (հողի մակերեսի բարեկարգման ծածկույթի վրա), հողի մեջ չունեն հիմքեր, չեն պահանջում թաց շինարարական պրոցեսներ և անհրաժեշտության դեպքում կարող են անջատվել հողից՝ առանց էական վնաս հասցնելու հողի ծածկույթին կամ այդ շինությանը.

17) **տեխնիկական պայմաններ՝** ինժեներական ենթակառուցվածքի համակարգերին միանալու նախագծման պայմաններ, որոնք տրվում են մատակարար կազմակերպությունների կողմից իրավասու մարմնին՝ վերջինիս հարցման հիման վրա.



18) **քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն (փորձագիտական եզրակացություն)**՝ նախագծային փաստաթղթերով ընտրված լուծումների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանության վերաբերյալ լիցենզավորված կազմակերպության կողմից տրվող եզրակացություն.

19) **քաղաքաշինության բնագավառի սերտիֆիկացված արտադրանք**՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս իրականացված և օրենքով սահմանված կարգով համապատասխանության գնահատման ճանաչում ստացած ճարտարապետաշինարարական նախագիծ և (կամ) շինարարական կոնստրուկտիվ համակարգի մասեր.

20) **քանդման (ապամոնտաժման) թույլտվություն**՝ փաստաթուղթ, որով հաստատվում է սեփականատիրոջ կամ նրա կողմից սահմանված կարգով լիազորված անձի՝ շենքերն ու շինությունները քանդելու (ապամոնտաժելու) իրավունքը:

5. Սույն կարգում օգտագործվող մյուս հասկացությունները կիրառվում են «Քաղաքաշինության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ օրենքների և իրավական ակտերի իմաստով:

### III. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Կառուցապատման նպատակով քաղաքաշինական գործունեությունն իրականացվում է համայնքի գլխավոր հատակագծով և գոտևորման նախագծով սահմանված հողի նպատակային ու գործառնական նշանակությանը, կառուցապատման (ծավալատարածական) չափորոշիչներին, սույն կարգի, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ կառուցապատողին սեփականության կամ այլ (կառուցապատման իրավասություն տվող) իրավունքով պատկանող հողամասում: Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների

ու դրանց պահպանական գոտիների տարածքներում կառուցապատման գործընթացն իրականացվում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2338-Ն որոշումներով սահմանված պահանջների ապահովմամբ՝ սույն կարգի 59-62-րդ կետերով, 63-րդ կետի 4-րդ ենթակետով, 71-րդ, 87-րդ, 118-րդ, 137-րդ և 154-րդ կետերով սահմանված կարգով:

7. Համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի բացակայության դեպքում կառուցապատման ընթացակարգն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N 479 որոշմամբ սահմանված կարգով:

8. Քաղաքաշինական փաստաթղթերի մշակումը, փորձաքննությունը, շինարարության իրականացումը, շինարարության որակի տեխնիկական հսկողությունը, ինժեներական հետազննումը և շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունը կարող են կատարել միայն համապատասխան գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձինք՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրանց կիրարկումն ապահովող Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի N 774-Ն, 2011 թվականի ապրիլի 7-ի N 510-Ն, 2009 թվականի հուլիսի 2-ի N 777-Ն, 2009 թվականի հուլիսի 2-ի N 775-Ն որոշումներով սահմանված կարգով:

9. Համայնքի վարչական սահմաններում կառուցապատման նպատակով թույլտվությունները և այլ փաստաթղթեր (այսուհետ՝ կառուցապատման թույլտվություններ) տալիս է համայնքի ղեկավարը, իսկ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև Երևանի վարչական շրջանի ղեկավարը (այսուհետ՝ իրավասու մարմին)՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 29-ի N 378-Ն որոշմամբ

15\_0596

հաստատված կարգով նախատեսված դեպքերի: Կառուցապատման թույլտվությունները տրամադրվում են (կամ մերժվում են՝ դրանց տրամադրման համար սույն կարգով նախատեսված ժամկետներում) իրավասու մարմնի որոշմամբ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

10. Ճարտարապետաշինարարական նախագծերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին՝ կախված շինարարական օբյեկտի ռիսկայնության աստիճանից (կատեգորիայից), ապահովվում է աշխատանքը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագրով կամ քաղաքաշինական փորձաքննություն իրականացնող կազմակերպության փորձագիտական եզրակացությամբ՝ սույն կարգով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 - Ն որոշման N 2 հավելվածով (այսուհետ՝ N 2 հավելված) սահմանված պահանջներին համապատասխան:

11. Սույն կարգով նախատեսված բոլոր թույլտվությունները, համաձայնեցումները, եզրակացությունները, ակտերը և այլ փաստաթղթեր վավերացվում են դրանք տրամադրող համապատասխան անձանց ստորագրությամբ ու կնիքով (եթե կնիք առկա է) կամ էլեկտրոնային ստորագրությամբ:

12. Նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին շինարարական աշխատանքների համապատասխանությունն ապահովվում է շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառուի (ենթակապալառուի) և տեխնիկական հսկողություն (օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ նաև հեղինակային հսկողություն) իրականացնող կազմակերպության (կազմակերպությունների) կողմից կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 - Ն որոշման N 4 հավելվածով (այսուհետ՝ N 4 հավելված) սահմանված միջին ռիսկայնության

աստիճանի դասակարգում ունեցող (II կատեգորիայի) պարզ և փոքրածավալ օբյեկտների համար՝ միայն շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառուի կողմից:

13. Ավարտված շինարարական օբյեկտի, ինչպես նաև ինժեներական ենթակառուցվածքի ցանցերին օբյեկտի միացումները և ինժեներական համակարգերի փորձարկումների արդյունքների համապատասխանությունը հաստատված նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին ու ստանդարտներին հավաստվում է ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի ակտով և փաստագրվում շահագործման թույլտվությամբ (ավարտված շինարարության փաստագրման ակտով):

14. Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում կառուցապատման կանոնակարգման միջոցառումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշմամբ սահմանված կարգով:

15. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 728-Ն որոշմամբ առանձնացված՝ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշմամբ սահմանված կարգով:

16. «Սևան» ազգային պարկի տարածքում քաղաքաշինական գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշմամբ սահմանված կարգով:

17. Քաղաքաշինական գործունեության տեսչական պետական վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից (այսուհետ՝ քաղաքաշինական պետական տեսչություն)՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների միջոցով՝ օրենքով և 15\_0596

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 55-Ն որոշմամբ սահմանված կարգով:

18. Իրավասու մարմնի կողմից կառուցապատման թույլտվություններ ստանալու նպատակով ներկայացված հայտը (դիմումը) մերժելու վերաբերյալ որոշումը և օրենքով սահմանված դեպքերում համապատասխան լիազորված մարմնի բացասական մասնագիտական եզրակացությունը պետք է պարունակեն մերժման հիմքերն ու հիմնավորված լինեն համապատասխան իրավական ակտերին հղումով:

19. Կառուցապատման թույլտվությունների տրամադրման համար օրենքով և սույն կարգով նախատեսված ժամկետներում իրավասու մարմինը կառուցապատողին պատշաճ ձևով ծանուցում է համապատասխան թույլտվության (նախագծման կամ շինարարության, կամ շահագործման թույլտվություններ) վերաբերյալ որոշման ընդունման մասին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

20. Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխաստվությունը սահմանվում է օրենքով:

21. Կառուցապատման թույլտվությունների տրամադրման ժամանակ ծագող վեճերը, այդ թվում՝ սույն կարգի 22-րդ և 23-րդ կետերով սահմանված փոխհատուցման ձևերի ու չափի անհամաձայնության դեպքում, լուծվում են օրենքով սահմանված կարգով:

22. Կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման կամ քանդման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ:

23. Եթե ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (մոնտաժման, վերանորոգման, վերականգնման և այլն) նպատակով պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում կամ ընդհանուր օգտագործման տարած-

15\_0596

քում (հող, փողոց, մայթ և այլն) իրականացվելու են քանդման աշխատանքներ, ապա կառուցապատողները կամ մատակարարները կրում են պետությանը կամ համայնքին պատճառած վնասներն օրենքով սահմանված կարգով հատուցելու պարտավորություն՝ հողամասը կամ ընդհանուր օգտագործման տարածքները նախկին վիճակում և իրավասու մարմնի թույլտվությամբ սահմանված ժամկետներում չվերականգնելու համար: Ընդ որում, ենթակառուցվածքների ընթացիկ (ոչ անհետաձգելի) վթարավերականգնողական աշխատանքները կատարվում են իրավասու մարմնի հետ համաձայնեցնելուց հետո:

24. Կառուցապատման թույլտվությունների փոփոխությունները կատարվում են դրանց տրամադրման համար սույն կարգով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

25. Կառուցապատվող հողամասի գործառնական և (կամ) նպատակային նշանակության փոփոխությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N 479 որոշումներով սահմանված կարգով՝ կախված տվյալ համայնքի գլխավոր հատակագծի առկայության կամ բացակայության հանգամանքից:

#### IV. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

26. Հայաստանի Հանրապետությունում շինարարության օբյեկտները, ելնելով դրանց ծավալից, նշանակությունից, կարևորությունից ու բարդությունից, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունից, ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հետևյալ հինգ կատեգորիաների՝

1) ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ I կատեգորիա.

- 2) միջին ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ II կատեգորիա.
  - 3) միջինից բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ III կատեգորիա.
  - 4) բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ IV կատեգորիա.
  - 5) բարձրագույն ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ V կատեգորիա:
27. Սույն կարգի 26-րդ կետի՝

1) 1-ին ենթակետով սահմանված՝ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները, որոնք կարող են իրականացվել կառուցապատողի կողմից՝ առանց նախագծման և շինարարության թույլտվությունների: Մատակարար կազմակերպությունների կողմից ենթակառուցվածքների անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման դեպքերը համարվում են շինարարության թույլտվություն չպահանջող գործառույթ, ընդ որում, այդ աշխատանքները կարող են սկսվել միայն իրավասու մարմնին տեղեկացնելուց հետո.

2) 2-րդ ենթակետով սահմանված՝ միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում այն շինարարական օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը փոխարինվում է նախագծող կազմակերպության երաշխավորագրով, իսկ շինարարության որակի տեխնիկական հսկողությունը՝ շինարարական կազմակերպության երաշխավորագրով.

3) 3-րդ ենթակետով սահմանված՝ միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում II և IV կատեգորիաների ռիսկայնության օբյեկտների միջակայքում բնութագրող ցուցանիշներ ունեցող օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են պարզ փորձաքննության.

4) 4-րդ ենթակետով սահմանված՝ բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում հատուկ և կարևորագույն նշանակություն ունե-

15\_0596

ցող շինարարական օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են համալիր փորձաքննության՝ ներառյալ օրենքով սահմանված պետական լիազորված մարմինների փորձաքննությունները կամ մասնագիտական եզրակացությունները: N 4 հավելվածի N 3 ցանկի 1-ին և 2-րդ կետերում ներառված՝ IV կատեգորիայի դասակարգում ունեցող օբյեկտների թվում են սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակություն ունեցող օբյեկտները, որոնք սահմանում է սեյսմիկ պաշտպանության բնագավառի լիազոր մարմինը.

5) 5-րդ ենթակետով սահմանված՝ բարձրագույն ռիսկայնության (V կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում հատկապես վտանգավոր և (կամ) տեխնիկապես բարդ, ինչպես նաև երկու և ավելի պետությունների շահերին առնչվող քաղաքաշինական (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ նշանակության) օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են հատուկ համալիր փորձաքննության և որոնց կառուցապատման թույլտվությունների տրամադրման պայմանները՝ յուրաքանչյուր առանձին դեպքի համար սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

28. Ըստ ռիսկայնության աստիճանի (կատեգորիաների) դասակարգված օբյեկտների ցանկերը սահմանված են N 4 հավելվածով:

**V. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ  
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)**

29. Նախագծման թույլտվությունը կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքը (այսուհետ՝ առաջադրանք) սահմանում է քաղաքաշինական օբյեկտի (այդ թվում ոչ հիմնական) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակմանը ներկայացվող պարտադիր պայմաններն ու սահմանափակումները՝ հիմք ընդունելով համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի պահանջները:



30. Առաջադրանքը (Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 - Ն որոշման N 5 հավելվածի (այսուհետ՝ N 5 հավելված) N 1-2 ձև) ներառում է տվյալ կառուցապատմանն առնչվող՝

1) քաղաքաշինական, պատմամշակութային ժառանգության, բնապահպանական, սանիտարահիգիենիկ, ճառագայթային, հակահրդեհային և տեխնիկական անվտանգության, հաշմանդամների ու բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության և այլ նորմատիվ պահանջներն ու սահմանափակումները.

2) նախագծային փաստաթղթերի մշակման փուլերը՝ համաձայն սույն կարգի 81 - 92-րդ կետերով սահմանված դրույթների.

3) անհրաժեշտ ելակետային տվյալներն ու օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում և այլն) նախագծման տեխնիկական պայմանները (այսուհետ՝ տեխնիկական պայմաններ).

4) առաջադրանքի գործողության ժամկետը:

31. Առաջադրանքի գործողության ժամկետը չի կարող գերազանցել՝

1) միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) օբյեկտների համար՝ մեկ տարին.

2) միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III կատեգորիայի) օբյեկտների համար՝ մեկուկես տարին.

3) բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) օբյեկտների համար՝ երկու տարին:

32. Բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) օբյեկտների համար առաջադրանքի գործողության ժամկետը յուրաքանչյուր առանձին դեպքում սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ սույն կարգի 27-րդ կետի 5-րդ ենթակետին համապատասխան:

33. Առաջադրանքով սահմանված պայմանները հինք են նախագծային փաստաթղթերի մշակման համար և պարտադիր են քաղաքաշինական գործունեության բոլոր մասնակիցների համար:

34. Անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքների փոխանցման դեպքում առաջադրանքով սահմանված պայմանները պահպանվում են լրիվ ծավալով:

35. Առաջադրանքի գործողության ժամկետը լրանալու դեպքում առաջադրանքի գործողությունը համարվում է դադարեցված, ընդ որում, կատարված ծախսերի ռիսկը կրում է կառուցապատողը:

36. Առաջադրանքը և դրա անբաժանելի մասը հանդիսացող տեխնիկական պայմաններն ու ելակետային նյութերը կառուցապատողին տրամադրվում են անվճար:

37. Առաջադրանք չի պահանջվում՝

1) հաստատված գոտևորման նախագիծ ունեցող տարածքներում բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով և քաղաքաշինության բնագավառի սերտիֆիկացված արտադրանքի (այսուհետ՝ սերտիֆիկացված նախագծեր) կիրառմամբ կառուցապատում իրականացնելիս.

2) N 4 հավելվածի N 1 ցանկով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներ կատարելիս.

3) կառույցի արտաքին տեսքը, հարաչափերն ու գործառնական նշանակությունը չփոփոխող՝

ա. միջին և միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (II և III կատեգորիաների) օբյեկտների կամ դրանց առանձին հատվածների ներքին վերակառուցումների համար,

բ. բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) բազմաբնակարան բնակելի շենքերում առանձին բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի ներքին վերակառուցման աշխատանքների համար, եթե դրանք չեն հանգեցնում շենքի սեյսմակայունությունն

15\_0596

ու հուսալիությունն ապահովող կառուցվածքների փոփոխությանը, չեն վատթարացնում շինարարության օբյեկտների կոնստրուկտիվ ու անվտանգության այլ բնութագրերը (ցուցանիշները) և չեն հանգեցնում բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքների փոփոխությանը:

38. Եթե սույն կարգի 37-րդ կետով սահմանված դեպքերում առաջանում է օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքի նոր ծառայությունների մատուցման կամ ծառայությունների մատուցման փոփոխության անհրաժեշտություն, ապա կառուցապատողը մինչև նախագծային աշխատանքներ սկսելը դիմում է (N 5 հավելվածի N 4-7 ձև) իրավասու մարմին՝ տեխնիկական պայմաններ և ելակետային տվյալներ ստանալու նպատակով:

39. Սույն կարգի 38-րդ կետով չնախատեսված դեպքերում կառուցապատողը, նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և միաժամանակ շինարարության թույլտվության ստացման նպատակով իրավասու մարմին ներկայացված դիմումում (N 5 հավելվածի N 2-1 ձև) համապատասխան նշում է կատարում ինժեներական ենթակառուցվածքի նոր ծառայությունների մատուցման կամ ծառայությունների մատուցման փոփոխության անհրաժեշտության բացակայության մասին:

40. Իրավասու մարմինը սույն կարգի 38-րդ կետով տեխնիկական պայմանների ստացման մասին դիմումն ստանալուց հետո եռօրյա ժամկետում հարցում է ներկայացնում մատակարար կազմակերպություններ և սույն կարգի 50-րդ և 51-րդ կետերով սահմանված ժամկետներում ու կարգով նրանցից ստանում է տեխնիկական պայմանները:

41. Սույն կարգի 38-րդ կետով նախատեսված դեպքերում ելակետային տվյալների ու տեխնիկական պայմանների տրամադրման գործառույթներն իրավասու մարմինն իրականացնում է (N 5 հավելվածի N 4-8 ձև) կառուցապատողի դիմումն ստանալու օրվանից՝

1) II դիսկալնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների համար՝

ա. 7-օրյա ժամկետում՝ բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կամ

սերտիֆիկացված նախագծերի տեղակապման դեպքում,

բ. 10-օրյա ժամկետում սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության մեջ չնշված օբյեկտների դեպքում.

2) 15-օրյա ժամկետում III և IV ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) օբյեկտների դեպքում:

42. Քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը հրապարակային սակարկությունների միջոցով օտարելու, կառուցապատման իրավունքով տրամադրելու դեպքում կառուցապատվող հողամասի ճարտարապետահատակագծային սահմանափակումները ներառող առաջադրանքի նախագիծն ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված համապատասխան ընթացակարգերի համար նախատեսված փաստաթղթերի կազմում

1) աճուրդային կարգով հողամասերն օտարելու դեպքում՝ աճուրդի կազմակերպման փաստաթղթերի փաթեթում.

2) մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում:

43. Սույն կարգի 42-րդ կետով նախատեսված դեպքերում առաջադրանքի նախագիծը տրամադրվում է հրապարակային սակարկությունների արդյունքներով աճուրդում կամ մրցույթում հաղթած անձին՝ սահմանված կարգով կնքվող պայմանագրի հետ:

44. Պետական սեփականություն կամ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը կառուցապատման նպատակով ուղղակի վաճառքի եղանակով օտարելիս, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված այլ դեպքերում առաջադրանքը կցվում է հողամասը կառուցապատման նպատակով տրամադրելու մասին որոշմանը:

45. Սույն կարգի 42-րդ և 44-րդ կետերում նշված դեպքերում՝ առաջադրանքի ձևավորման փուլում մատակարար կազմակերպությունների կողմից տեխնիկական պայմանները տրամադրվում են իրավասու մարմին՝ սույն կարգի 51-րդ կետում նշված ժամկետներում:

46. Եթե անհրաժեշտություն է առաջանում փոփոխելու կառուցապատվող հողամասի գործառնական կամ նպատակային նշանակությունը, ապա առաջադրանքի նախագիծն ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան ընթացակարգերի համար նախատեսված փաստաթղթերի փաթեթում: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխվում է տարածական պլանավորման փաստաթղթերի բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, որի պարագայում առաջադրանքը տրամադրվում է հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

47. Կառուցապատողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով առաջադրանք ստանալու համար իրավասու մարմին է ներկայացնում հայտ (N 5 հավելվածի N 1-1 ձև), որում նշվում են նախագծվող նոր օբյեկտի կամ փոփոխման (վերակառուցման, վերականգնման, ուժեղացման կամ գործառնական նշանակության փոփոխության) ենթակա օբյեկտի (կամ դրա մի հատվածի) գտնվելու վայրը, նշանակությունը, նախատեսվող մակերեսը, կառույցի բարձրությունը, կառույցի գործառնական նշանակության փոփոխման դեպքում՝ փոփոխման նպատակը և սույն կետում նշված ձևաթղթում ներկայացված այլ տեղեկություններ:

48. Հայտին կցվում են՝

1) կառուցապատվող հողամասի հատակագիծը՝ նախագծվող կամ փոփոխման ենթակա օբյեկտի առաջարկվող տեղանշմամբ, իսկ կառույցի գործառնական նշանակության փոփոխության դեպքում՝ նաև վերջինիս հատակագիծը (հատակագծերը).

2) անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործողի՝ անշարժ գույքը փոփոխելու իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը:

49. Կառույցների գործառնական նշանակության փոփոխություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ սահմանված կարգով:

50. Իրավասու մարմինը հայտի ընդունման օրվանից 3-օրյա ժամկետում հարցում է ներկայացնում մատակարար կազմակերպություններին (եթե նախատեսվող նոր օբյեկտի կառուցման կամ վերակառուցման, կամ գործառնական նշանակության փոփոխության հետևանքով առաջանում է օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքի նոր ծառայությունների մատուցում կամ ծառայությունների մատուցման փոփոխություն)՝ ինժեներական ենթակառուցվածքի ցանցերին միանալու տեխնիկական պայմաններն ստանալու նպատակով, հարցմանը կցելով հայտում ներկայացված փաստաթղթերը:

51. Մատակարար կազմակերպությունները տեխնիկական պայմաններն իրավասու մարմնին են տրամադրում վերջինիս հարցումն ստանալու օրվանից 5-օրյա ժամկետում II կատեգորիայի, 10-օրյա ժամկետում III կատեգորիայի և 15-օրյա ժամկետում IV կատեգորիայի օբյեկտների համար:

52. Առաջադրանքը (N 5 հավելվածի N 1-2 ձև) կառուցապատողին է տրամադրվում հայտի ընդունման օրվանից 10-օրյա ժամկետում՝ II կատեգորիայի օբյեկտների համար, 15-օրյա ժամկետում՝ III կատեգորիայի օբյեկտների համար, 20-օրյա ժամկետում՝ IV կատեգորիայի օբյեկտների համար՝ մատակարար կազմակերպություններից տեխնիկական պայմաններ ստանալու անհրաժեշտության դեպքում:

53. Եթե նախատեսվող նոր օբյեկտի կառուցման կամ վերակառուցման, կամ գործառնական նշանակության փոփոխության հետևանքով չի առաջանում օբյեկտի, ինժեներական ենթակառուցվածքի նոր ծառայությունների մատուցման կամ ծառայությունների մատուցման փոփոխության անհրաժեշտություն, ապա առաջադրանքը տրամադրվում է

հայտի ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում՝ II կատեգորիայի օբյեկտների համար, 10-օրյա ժամկետում՝ III կատեգորիայի օբյեկտների համար և 15-օրյա ժամկետում՝ IV կատեգորիայի օբյեկտների համար:

54. V կատեգորիայի օբյեկտների յուրաքանչյուր առանձին դեպքի համար (եթե միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ), կառուցապատման ծրագիրն իրականացնող համապատասխան ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից մշակվում է օբյեկտի նախագծման տեխնիկական բնութագիրը և օրենքով սահմանված դեպքերում ու կարգով ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ քննարկման: Իրավասու մարմինը, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած տեխնիկական բնութագրի հիման վրա, սույն կարգի պահանջներին համապատասխան, կազմում է առաջադրանքը (ներառյալ անհրաժեշտ ելակետային նյութերն ու տեխնիկական պայմանները) և տրամադրում սույն կետում նշված լիազորված մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առաջարկված ժամկետներում:

55. Առաջադրանքի անբաժանելի մաս կազմող՝ սույն կարգի 30-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ելակետային տվյալներն ու տեխնիկական պայմանները՝ N 5 հավելվածի N 1-2 ձևում աստղանիշով (\*) նշված դրույթների մասով, տրամադրվում են նաև վերջիններիս գրաֆիկական արտացոլումն ամրագրող ամփոփ սխեմայով:

56. Կառուցապատվող հողամասի սահմաններում առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման անհրաժեշտության դեպքում N 5 հավելվածի N 1-2 ձևում «Լրացուցիչ պայմաններ» բաժնի 25-րդ կետում կատարվում է համապատասխան գրառում: Կառուցապատողն առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերում տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ՝ մինչև նախագծային աշխատանքներն սկսելը:

57. Էլեկտրոնային հաղորդակցության (ներառյալ ամրակցված հեռախոսացանցը) ենթակառուցվածքների երկրորդային տվյալների մասով ամփոփ սխեմայում նշվում են N 5 հավելվածի N 1-2 ձևի՝

1) «Նախագծվող հողամասի բնութագիրը» բաժնի 5-րդ կետով սահմանված՝ գոյություն ունեցող էլեկտրոնային հաղորդակցության ստորգետնյա համակարգերի մասին տեղեկատվությունը՝ դրանց կառուցման համար տրված շինարարության թույլտվությանը համապատասխան.

2) «Նախագծային պահանջներ» բաժնի 12.4-րդ կետով սահմանված էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը)՝ մինչև կառուցապատվող հողամասի սահմանագիծը հատվածի տեղադիրքը, որը պետք է ապահովի՝

ա. հանրային էլեկտրոնային հաղորդակցության տարբեր օպերատորների կողմից դրա համատեղ օգտագործման հնարավորությունը՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան,

բ. կառուցապատողի կողմից շինարարական աշխատանքների կատարման նվազագույն ծավալը,

գ. գոյություն ունեցող ստորգետնյա մալուխատարների (առկայության դեպքում) օգտագործման հնարավորությունը,

դ. համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով (առկայության դեպքում) ինժեներական ցանցերի, սարքավորումների, ինչպես նաև ստորգետնյա տարածքների օգտագործման գոտիների համար ընդունված լուծումներին համապատասխանությունը:

58. Այն դեպքերում, երբ կառուցապատվող հողամասի ինժեներական հետազննումները (ճարտարագիտական ուսումնասիրությունները) անհնարին են՝ առանց քանդման աշխատանքների իրականացման, հայտին կցվում է նաև քանդման (կամ ապամոնտաժման) թույլտվություն ստանալու մասին դիմումը՝ սույն կարգի 119-րդ և 121-րդ կետերով սահմանված 15\_0596



ված պահանջների ապահովմամբ: Քանդման թույլտվությունը տրվում է առաջադրանքի հետ միաժամանակ, ընդ որում, օբյեկտը փաստացի քանդվում է նշված թույլտվությամբ սահմանված հաջորդականությամբ և կարգով՝ օրենքով սահմանված տեղական տուրքը կառուցապատողի կողմից վճարվելուց հետո:

59. Պետական ցուցակներում ներառված պատմության և մշակույթի հուշարձան (այսուհետ՝ պատմամշակութային հուշարձան) հանդիսացող կառույցների նկատմամբ կամ պատմամշակութային հուշարձանի պահպանական գոտիներում քաղաքաշինական գործունեություն նախատեսող դեպքերում իրավասու մարմինը հայտն ստանալու օրվանից 3-օրյա ժամկետում հարցում է ներկայացնում մշակույթի, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության ու օգտագործման բնագավառների լիազորված մարմին (այսուհետ՝ պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմին)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

60. Պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմնի մասնագիտական եզրակացությունն իրավասու մարմինն է տրամադրվում հայտն ստանալու օրվանից՝

1) պատմամշակութային հուշարձանի պահպանական գոտիներում նախատեսվող օբյեկտների վերաբերյալ՝ սույն կարգի 51-րդ կետով նախատեսված ժամկետներում կախված համաձայնեցման ներկայացված օբյեկտի ռիսկայնության աստիճանից.

2) պատմամշակութային հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման նախագծերի առաջադրանքների վերաբերյալ (եթե նշված աշխատանքների պատվիրատուն պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմինը չէ)՝ 15-օրյա ժամկետում.

3) պատմամշակութային հուշարձանի փոփոխում կամ տեղափոխում նախատեսող դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման վերաբերյալ առա-

ջարկություններ և դիտողություններ տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ժամկետում:

61. Պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազոր մարմնի բացասական մասնագիտական եզրակացության դեպքում առաջադրանքը մերժվում է:

62. Եթե պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմինը հանդես է գալիս որպես հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման աշխատանքների պատվիրատու, ապա նրա կողմից կազմված և իրավասու մարմինն տրամադրված նախագծման տեխնիկական բնութագրի հիման վրա իրավասու մարմինը սույն կարգով IV կատեգորիայի դասակարգում ունեցող օբյեկտների համար նախատեսված կարգով և ժամկետներում մատակարար կազմակերպություններից ստանում է տեխնիկական պայմանները (անհրաժեշտության դեպքում), կազմում առաջադրանքն ու տրամադրում սույն կետում նշված լիազորված մարմին:

63. Իրավասու մարմնի կողմից հայտը մերժվում է, եթե՝

1) հայտում ամրագրված են այնպիսի ցուցանիշներ (պայմաններ), որոնք հակասում են տվյալ տարածքի տարածական պլանավորման փաստաթղթերի կամ քաղաքաշինական, բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և այլ նորմատիվ փաստաթղթերի պահանջներին.

2) ներկայացվող փաստաթղթերը պարունակում են սխալ կամ ոչ լիարժեք տեղեկություններ, կամ սույն կարգի 64-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացված փաստաթղթերի ցանկը չի համալրվել.

3) սույն կարգի 58-րդ կետում նշված դեպքերում, եթե մերժվում է քանդման (ապամոնտաժման) թույլտվությունը.

4) պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմնի բացասական մասնագիտական եզրակացության առկայության դեպքում.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ առաջադրանքը համաձայնեցնելու իրավասությամբ օժտված պետական կառավարման այլ լիազորված մարմինների բացասական եզրակացության առկայության դեպքում.

6) մատակարար կազմակերպությունների կողմից տեխնիկական պայմանների տրամադրման վերաբերյալ իրավասու մարմին հիմնավորված մերժում ներկայացվելու դեպքում:

64. Եթե հայտին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ դրանց բովանդակությունը չի համապատասխանում սույն կարգի 47-րդ և 48-րդ կետերով սահմանված պահանջներին, կամ ներկայացրած փաստաթղթերում առկա են սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ, ապա իրավասու մարմինը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 41-րդ հոդվածների պահանջների համաձայն, հայտատուին առաջարկում է 5-օրյա ժամկետում համալրել բացակայող փաստաթղթերը կամ ինքնուրույն շտկում է ակնհայտ սխալներն ու վրիպակները՝ կա՛մ հայտատուի ներկայությամբ, կա՛մ նախապես, կա՛մ հետագայում հայտատուին իրազեկելով դրա մասին:

65. Կառուցապատողը կարող է համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարել մերժված հայտում ներկայացված փաստաթղթերում և կրկին հայտ ներկայացնել իրավասու մարմին:

66. Իրավասու մարմինը քննարկում է կրկնակի հայտը և սույն կարգի 53-րդ կետով նախատեսված ժամկետներում կառուցապատողին տալիս է առաջադրանք, եթե բացակայում են հայտի մերժման հիմքերը:

67. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V կատեգորիաների դասակարգում ունեցող օբյեկտների ու քաղաքաշինական համալիրների առաջադրանքները կարող են լրամշակվել իրավասու մարմնի կողմից միջանկյալ համաձայնեցում ստա-

ցած սույն կարգի 87-րդ կետով սահմանված կարգով մշակված էսքիզային նախագծի հիման վրա, եթե նման պայման ամրագրված է առաջադրանքում:

VI. ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ  
ԴՐԱՆՑ ՀԱՄԱԼԻԻՐՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱ-  
ԳԾԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ.  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ (ՔԱՆԴՄԱՆ ԿԱՄ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ)  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

68. Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների (այդ թվում ոչ հիմնական) կառուցման, դրանց վերակառուցման (ներառյալ՝ քանդման կամ ապամոնտաժման), վերականգնման և ուժեղացման նախագծերը, քաղաքաշինական համալիրների և գործառնական տարածքների հատակագծման նախագծերը, ինչպես նաև բարեկարգման (կանաչապատման) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը (այսուհետ՝ նախագծային փաստաթղթեր) մշակվում են հաստատված տարածական պլանավորման փաստաթղթերին համապատասխան՝ առաջադրանքով (նախագծման թույլտվությամբ) սահմանված պահանջների ապահովմամբ:

69. Կառուցապատման նախագծերը և գործառնական տարածքների հատակագծման նախագծերը մշակվում են նոր կամ վերակառուցվող բնակելի, հասարակական, արտադրական շենքերի խմբերի, ռեկրեացիոն-առողջարանային, մարզական և այլ նշանակության քաղաքաշինական համալիրների (այսուհետ՝ քաղաքաշինական համալիր) համար:

70. Գործառնական տարածքների հատակագծման նախագծերը մշակվում են կառուցապատման նախագծերի կազմում կամ, ըստ անհրաժեշտության, որպես կառուցապատման հաջորդ փուլերում նախագծային փաստաթղթերի մշակման համար հիմք հանդիսացող ինքնուրույն փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 13-ի N 150 որոշմամբ սահմանված կարգով:

71. Բարեկարգման և կանաչապատման նախագծերը մշակվում են ինչպես նախագծային փաստաթղթերի կազմում՝ որպես դրանց անբաժանելի մաս, այնպես էլ՝ որպես ինքնուրույն փաստաթուղթ՝ ընդհանուր օգտագործման տարածքների (գրոսայգիներ, հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, լողափեր և այլն), բնության հատուկ պահպանվող տարածքների, պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների և այլ տարածքների լանդշաֆտային կազմակերպման նպատակով:

72. Նախագծային փաստաթղթերի մշակման նպատակով կառուցապատողը նախագծային փաստաթղթեր մշակող կապալառուի հետ (այսուհետ՝ նախագծող) կնքում է նախագծային և հետագոտական աշխատանքների կապալի պայմանագիր (այսուհետ՝ նախագծային կապալի պայմանագիր): Օրենքով սահմանված դեպքերում կամ կառուցապատողի հայեցողությամբ՝ նախագծողի ընտրությունը կարող է կատարվել ճարտարապետական հրապարակային մրցույթների անցկացման միջոցով:

73. Նախագծային կապալի պայմանագրին կցվում են՝

1) սահմանված կարգով տրված առաջադրանքը (բացառությամբ առաջադրանք չպահանջող սույն կարգի 37-րդ կետով սահմանված դեպքերի).

2) կառուցապատողի կողմից կազմված տեխնիկական բնութագիրը (նախագծային առաջադրանքը) (N 5 հավելվածի NN 4-2 և 4-3 ձևեր), ընդ որում, տեխնիկական բնութագիրն ու նախագծման թույլտվությունը չեն կարող պարունակել միմյանց հակասող դրույթներ.

3) վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող օբյեկտների դեպքում նաև՝ դրանց տեխնիկական վիճակի մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի հոկտեմբերի 30-ի N 346 որոշմամբ սահմանված կարգով կազմված եզրակացությունը.

4) ինժեներակրթաբանական հետազնությունների նյութերը, տարածքի տեղագրագեոդեզիական և կադաստրային հանույթները.

5) բազմակի օգտագործման օրինակելի նախագծով կամ սերտիֆիկացված նախագծով կառուցապատումն իրականացնելու դեպքում նաև՝ տեղակապվող օրինակելի նախագիծը:

74. Սույն կարգի 73-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված նյութերի առկայությունը պարտադիր է շինարարության թույլտվություն պահանջող օբյեկտների (բացառությամբ գյուղական բնակավայրերի տնամերձ հողամասերում կառուցվող օժանդակ տնտեսական շինությունների) համար՝ անկախ դրանց ռիսկայնության աստիճանից:

75. Ինժեներակրթական հետազնությունների նյութերի փորձաքննությունն իրականացվում է N 2 հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 4-ի N 1530-Ն որոշմամբ սահմանված կարգով:

76. Բազմակի օգտագործման օրինակելի նախագծերը ներդրվում և կիրառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի N 814-Ն որոշմամբ սահմանված պահանջների ապահովմամբ:

77. Նախագծային փաստաթղթերի (այդ թվում՝ ըստ սույն կարգի 81-րդ կետում նշված նախագծման փուլերի) կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են քաղաքաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի գերատեսչական ակտով: Նախագծային կապալի պայմանագրով ամրագրված պայմաններին համապատասխան՝ նախագծային փաստաթղթերի կազմում կարող են մշակվել լրացուցիչ նյութեր, որոնց բովանդակությունը և մասշտաբը նշվում են կառուցապատողի կողմից կազմված տեխնիկական բնութագրում:

78. Նախագծողը կարող է պայմանագրով ամրագրված պայմանների համաձայն հավաքել սույն կարգի 73-րդ կետի 3-րդ ու 4-րդ ենթակետերում նշված և կառուցապատողի տեխնիկական բնութագրում նշված լրացուցիչ պայմանների (առկայության դեպքում) կատարման համար անհրաժեշտ ելակետային նյութերը կամ դրանց մի մասը:

79. Պետական կամ համայնքի բյուջեի (այդ թվում՝ վարկային և դրամաշնորհային, եթե միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ իրականացվող օբյեկտների նախագծման դեպքում՝

1) նախագծող կազմակերպությունն ընտրվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

2) նախագծի կազմում պարտադիր մշակվում են օբյեկտի նախահաշվային փաստաթղթերը:

80. Սույն կարգի 79-րդ կետով չնախատեսված դեպքերում նախահաշվային փաստաթղթերը մշակվում են կառուցապատողի հայեցողությամբ:

81. Նախագծային փաստաթղթերը, կախված նախագծվող օբյեկտի ռիսկայնության աստիճանից (կատեգորիայից), կարող են մշակվել մեկ՝ «Աշխատանքային նախագիծ» կամ երկու՝ «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» փուլերով:

82. Մեկ փուլով մշակվում են II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերը, բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և սերտիֆիկացված նախագծերի տեղակապման նախագծերը, իսկ երկու փուլով՝ IV և V կատեգորիաների օբյեկտների նախագծային փաստաթղթերը:

83. Նախագծային փաստաթղթերի մշակման փուլերը սահմանվում են առաջադրանքով և նախագծային կապալի պայմանագրով: Նախագծային լուծումները պետք է ապահովեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջները:

84. Նախագծային փաստաթղթերի՝ երկու փուլով մշակման դեպքում համաձայնեցվող փուլ է համարվում «Նախագիծ» փուլը, որի հիման վրա, սույն կարգին համապատասխան, տրվում է շինարարության թույլտվություն՝ աշխատանքների իրականաց-  
15\_0596

ման հաջորդականության (նախապատրաստական, հողային, շինմունտաժային աշխատանքներ և այլն) վերաբերյալ համապատասխան նշումով:

85. Հաջորդական՝ «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը մշակվում է համաձայնեցված «Նախագիծ» փուլի հիման վրա և դրանով ընդունված լուծումներին համապատասխան:

86. Կառուցապատման նախագծի «Աշխատանքային նախագիծ» (մեկ փուլով մշակման դեպքում) կամ «Աշխատանքային փաստաթղթեր» (երկու փուլով մշակման դեպքում) նախագծային փաստաթղթերում ներառվում են առաջադրանքով նախատեսված օբյեկտների աշխատանքային փաստաթղթերը:

87. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում, պատմամշակութային հուշարձանների և դրանց պահպանական գուտիների տարածքներում կառուցապատվող հողամասն ընդգրկող տարածքի համար սահմանված կարգով հաստատված գոտևորման նախագծի բացակայության դեպքում, ինչպես նաև N 4 հավելվածի N 3 ցանկով սահմանված հատուկ և կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտներ ու քաղաքաշինական համալիրներ նախագծելիս՝ առաջադրանքով կարող է նախատեսվել նաև նախագծի միջանկյալ՝ «Էսքիզային նախագիծ» կամ «Կառուցապատման սխեմա» փուլի մշակման պայման՝ օբյեկտի ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումներն իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շահագրգիռ մարմինների հետ նախնական համաձայնեցման համար:

88. «Էսքիզային նախագիծը» կամ «Կառուցապատման սխեման» հիմք չեն շինարարության թույլտվություն տրամադրելու համար:



89. Սույն կարգի 87-րդ կետով սահմանված դեպքերում «Կառուցապատման սխեմայի» համաձայնեցման ընթացակարգն իրականացվում է՝

1) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում՝ սույն կարգի 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերում նշված համապատասխան որոշումներով սահմանված կարգով.

2) հաստատված տարածական պլանավորման փաստաթղթերի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N 479 որոշմամբ սահմանված կարգով:

90. Իրավասու մարմինը կառուցապատողի ներկայացրած էսքիզային նախագիծը քննարկում է սույն կարգի 59-րդ և 60-րդ կետերով սահմանված կարգով ու ժամկետներում նախագծման թույլտվության (առաջադրանքի) վերաբերյալ մասնագիտական եզրակացություն տրամադրած կամ այն համաձայնեցրած շահագրգիռ մարմինների հետ և կառուցապատողին ծանուցում է միջանկյալ համաձայնություն տալու մասին: Միջանկյալ համաձայնեցման փաստաթղթին կցվում են իրավասու և շահագրգիռ մարմինների առաջարկություններն ու դիտողությունները (առկայության դեպքում), որոնք պետք է հաշվի առնվեն նախագծման հաջորդ փուլերում:

91. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V կատեգորիաների դասակարգում ունեցող օբյեկտների ու համալիրների առաջադրանքները կարող են լրամշակվել միջանկյալ համաձայնեցում ստացած՝ սահմանված կարգով մշակված էսքիզային նախագծի հիման վրա, եթե նման պայման ամրագրված է առաջադրանքում:

92. Էսքիզային նախագծի մշակումը և (կամ) առաջադրանքի լրամշակումը հիմք չեն առաջադրանքի գործողության ժամկետը երկարաձգելու համար:

93. Կառուցապատողը նախագծային աշխատանքների ավարտից հետո նախագծային փաստաթղթերը ներկայացնում է համապատասխան լիցենզիա ունեցող անձին՝

փորձաքննության (բացառությամբ սույն կարգի 95-րդ կետում նշված՝ փորձաքննություն չպահանջող դեպքերի):

94. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացվում է N 2 հավելվածով սահմանված կարգով:

95. Փորձաքննություն չի պահանջվում՝

1) I կատեգորիայի ռիսկայնության շինարարական աշխատանքներ կատարելու համար.

2) II կատեգորիայի ռիսկայնության օբյեկտների նախագծային փաստաթղթերի համար.

3) բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սերտիֆիկացված նախագծերի գրոյական նիշից բարձր նախագծային փաստաթղթերի համար:

96. II կատեգորիայի ռիսկայնության օբյեկտների նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին ապահովվում է նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագրով:

97. Բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կամ սերտիֆիկացված նախագծերի տեղակապման (գրոյական նիշից ցածր) նախագծային փաստաթղթերը մշակվում են տեղակապվող օբյեկտի ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) համար սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

98. Կառուցապատողը, նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և միաժամանակ շինարարության թույլտվության ստացման նպատակով դիմում է (N 2 հավելվածի N 2-1 ձև) իրավասու մարմին՝ կցելով շինարարության թույլտվության (իսկ սույն կարգի 116-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաև քանդման թույլտվության) տեղական տուրքը վճարելու մասին անդորրագիրը (անդորրագրերը), նախագծային փաստաթղթերը (երկու օրինակից), փորձաքննության դրական եզրակացությունը (եզրակացությունները) կամ Հայաստանի Հանրապետության Հանրապետության կառավարության կողմից հաստատված 15\_0596

տանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախագծային աշխատանքների կապալառուի գրավոր երաշխավորագիրը, ինչպես նաև սույն կետում նշված ձևաթղթում ներկայացված այլ տեղեկություններ:

99. Համաձայնեցման ներկայացվող նախագծային փաստաթղթերի կազմում ներառվում են կառուցապատվող հողամասից դուրս՝ ինժեներական ենթակառուցվածքի ընդհանուր ցանցերին միացող գծերի կառուցման հետևանքների (առկայության դեպքում) վերացմանն ուղղված նախագծային լուծումները:

100. Իրավասու մարմինը համաձայնեցնում է նախագծային փաստաթղթերը և միաժամանակ տալիս է շինարարության թույլտվությունը՝ սույն կարգի 98-րդ կետում նշված դիմումն ստանալու օրվանից՝

1) II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների համար՝

ա. 3-օրյա ժամկետում՝ բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կամ սերտիֆիկացված նախագծերի տեղակապման դեպքում,

բ. 5-օրյա ժամկետում՝ սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության մեջ չնշված օբյեկտների դեպքում.

2) 10-օրյա ժամկետում՝ III ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների դեպքում.

3) 15-օրյա ժամկետում IV ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների դեպքում:

101. Իրավասու մարմնի կողմից համաձայնեցվելուց և շինարարության թույլտվությունը տրամադրվելուց հետո նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված, որոնցից մեկ օրինակը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով շինարարության թույլտվության հետ միասին հանձնվում է կառուցապատողին, իսկ մյուսը մնում է իրավասու մարմնի մոտ:

102. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 660 որոշմամբ հասարակության իրազեկում նախատեսող դեպքերում և կարգով իրավասու մարմինն ապահովում է կառուցապատվող օբյեկտի վերաբերյալ հասարակության իրազեկումը:

103. Հասարակության իրազեկում պահանջող դեպքերում՝ սույն կարգի 100-րդ կետում նշված ժամկետներին գումարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 660 որոշմամբ նախատեսված ժամկետը:

104. Դիտողություններով վերադարձված և դրանց հաշվառմամբ լրանշակված նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են, և դրանց հիման վրա տրվում է շինարարության թույլտվություն՝ սույն կարգի 100-րդ կետով սահմանված ժամկետներում:

105. Ոչ հիմնական օբյեկտների համար իրավասու մարմնի կողմից տրվում է տեղադրման թույլտվություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896 որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

106. Նախագծային փաստաթղթերը չեն համաձայնեցվում, և շինարարության թույլտվությունը մերժվում է հետևյալ դեպքերում՝

1) նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում նախագծման թույլտվությանը (առաջադրանքով) սահմանված պայմաններին (այդ թվում՝ տեխնիկական) և սահմանափակումներին կամ դրանց կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներին.

2) սույն կարգի 98-րդ կետով սահմանված փաստաթղթերը պարունակում են ոչ հավաստի կամ ոչ լիարժեք տեղեկություններ, կամ սույն կարգի 107-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացված փաստաթղթերի ցանկը չի համալրվել.

3) նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և շինարարության թույլտվության տրամադրման մասին դիմումը ներկայացվել է նախագծման թույլտվության (առաջադրանքի) գործողության ժամկետը լրանալուց հետո.

4) նախագծման թույլտվություն (առաջադրանք) չպահանջող դեպքերում՝

ա. նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում հաստատված գոտևորման նախագծով սահմանված պահանջներին,

բ. թեև սույն կարգի 39-րդ կետին համապատասխան ներկայացված դիմումում նշվել է ինժեներական ենթակառուցվածքի նոր ծառայությունների մատուցման կամ ծառայությունների մատուցման փոփոխության անհրաժեշտության բացակայության մասին, սակայն դրանք անհրաժեշտ են.

5) սույն կարգի 116-րդ կետում նշված դեպքերում, եթե մերժվում է քանդման (ապամոնտաժման) թույլտվությունը կամ եթե չի ներկայացվել օրենքով սահմանված տեղական տուրքի վճարման անդորրագիրը (անդորրագրերը).

6) նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը չեն համապատասխանում քաղաքաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի գերատեսչական ակտերով սահմանված պահանջներին:

107. Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա իրավասու մարմինն օրենքով սահմանված կարգով առաջարկում է կառուցապատողին 5-օրյա ժամկետում համալրել բացակայող փաստաթղթերը:

108. Հաստատված նախագծային փաստաթղթերում փոփոխություններ կատարվում են՝ սույն կարգով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

109. Կառուցապատման նախագծի շինարարության թույլտվությունը տրվում է քաղաքաշինական համալիրում ներառված օբյեկտների նախագծային փաստաթղթերի, իսկ բազմակի օգտագործման կամ սերտիֆիկացված նախագծերով կառուցապատում իրականացնելու դեպքում՝ դրանց տեղակապման նախագծերի հիման վրա:

110. Շինարարության թույլտվությունը մերժվում է միայն սույն կարգի 106-րդ կետով սահմանված հիմքերով, ընդ որում, կատարված ծախսերի ռիսկը կրում է կառուցապատողը:

111. Նոր կառուցվող շենքերի, շինությունների համար շինարարության թույլտվությունը տրվում է 2 տարի ժամկետով, եթե տվյալ օբյեկտի շինարարության համար քաղա-  
15\_0596

քաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի ՄՆԻՊ 1.04.03-85\* (Ձեռնարկությունների շենքերի և կառուցվածքների շինարարության տևողության նորմերը) գերատեսչական ակտով սահմանված նորմերով այլ ժամկետներ նախատեսված չեն:

112. Գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման և բարեկարգման աշխատանքների համար թույլտվությունը տրվում է նախագծային փաստաթղթերով տվյալ օբյեկտի շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) տևողության նորմերով հաշվարկված ժամկետով:

113. Սույն կարգի 111-րդ կետով սահմանված ժամկետների հաշվարկի սկիզբ է համարվում շինարարության թույլտվությունն ուժի մեջ մտնելու օրը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

114. Ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը ներառվում է շինարարության տևողության մեջ՝ բացառությամբ բարձրագույն դիսկալնության աստիճանի (V կատեգորիայի) օբյեկտների, որոնց ժամկետը յուրաքանչյուր առանձին դեպքում սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

115. Անշարժ գույքի նկատմամբ սեփականության (կառուցապատման, օգտագործման) իրավունքների փոխանցման, կառուցման փուլում գտնվող կամ ավարտված, սակայն շահագործման չհանձնված շենքերի ու շինությունների նկատմամբ իրավունքների՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական գրանցման դեպքում շինարարության (քանդման կամ ապամոնտաժման, կամ տեղադրման) թույլտվությունը և դրանով սահմանված պայմանները պահպանվում են լրիվ ծավալով:

116. Եթե նոր կառուցվող օբյեկտների շինարարությունը հնարավոր չէ՝ առանց տվյալ կառուցապատվող հողամասում գտնվող շենքի (շենքերի) և կամ շինության (շինու-

15\_0596

թյունների) քանդման, ապա նոր կառուցվող օբյեկտների համար տրված շինարարության թույլտվությունը՝ համապատասխան նշումով նաև քանդման (կամ ապամոնտաժման) թույլտվություն է, ընդ որում, քանդումը կամ ապամոնտաժումն իրականացվում են սահմանված կարգով համաձայնեցված նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ և կարգով: Սույն կետով նախատեսված դեպքերում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության՝ օրենքով սահմանված տուրքերը վճարվում են միաժամանակ:

117. Շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և գուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես սույն կարգով համաձայնեցված ու հաստատված նախագծային փաստաթղթերի, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

118. Պատմամշակութային հուշարձանի տեղափոխման՝ օրենքով սահմանված բացառիկ դեպքերում, պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմնի դրական եզրակացության հիման վրա և Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվության առկայության դեպքում իրավասու մարմնի կողմից տրվում է հուշարձանի ապամոնտաժման թույլտվություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշմամբ սահմանված պահանջների ապահովմամբ:

119. Եթե օբյեկտի քանդումը չի նախատեսում նոր օբյեկտի կառուցում, և հաջորդող աշխատանքների իրականացման համար չի պահանջվում շինարարության թույլտվություն, կամ սույն կարգի 58-րդ կետին համապատասխան՝ կառուցապատվող հողամասի ինժեներական հետազննումներն անհնարին են՝ առանց քանդման աշխատանքների, ապա կառուցապատողը (սեփականատերը կամ նրա կողմից՝ սահմանված կարգով լիազորված անձը) քանդման թույլտվություն ստանալու համար իրավասու մարմին է ներկայացնում դիմում՝ համաձայն N 5 հավելվածի N 2-2 ձևի: Կառուցապատողը պարտավոր է օրենքով 15\_0596

սահմանված կարգով վճարել քանդման թույլտվության տուրքը և քանդումն իրականացնել սահմանված կարգով համաձայնեցված նախագծային փաստաթղթերին համապատասխան:

120. Քանդման (ապամոնտաժման) թույլտվությունն իրավասու մարմնի կողմից տրամադրվում կամ մերժվում է սույն կարգի 100-րդ կետով սահմանված ժամկետներում, ընդ որում, թույլտվությունը մերժվում է միայն սույն կարգի 58-րդ, 116-րդ, 118-րդ և 119-րդ կետերով սահմանված պահանջները չբավարարելու հիմքերով:

121. Քանդման (ապամոնտաժման) թույլտվությունների տրամադրման ընթացակարգն իրականացվում է՝ քանդման ենթակա օբյեկտի ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) համար սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

122. Իրավասու մարմինը 3-օրյա ժամկետում շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) թույլտվության պատճենները ներկայացնում է քաղաքաշինական պետական տեսչություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համապատասխան հարկային (տարածքային) տեսչություն: Իրավասու մարմինը տրամադրած թույլտվության մասին նույն ժամկետում իրազեկում է նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետներին (բացառությամբ Երևան քաղաքի):

123. Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը (բացառությամբ գյուղական բնակավայրերում իրականացվող կառուցապատման և անհատական բնակելի տների) չավարտելու դեպքում իրավասու մարմինը կառուցապատողին գրավոր նախագգուշացնում է շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու մասին:

124. Իրավասու մարմնի կողմից շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը կարող է երկարաձգվել՝ ոչ ավելի, քան տվյալ օբյեկտի չիրա-



կանացված աշխատանքների համար շինարարության տնօրնության նորմերով հաշվարկված ժամկետի չափով:

125. Սույն կարգի 123-րդ կետով սահմանված դեպքում կառուցապատողը շինարարության թույլտվություն տվող մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով ենթարկվում է վարչական պատասխանատվության:

126. Եթե կառուցապատողը նախազգուշացումն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում չի դիմում շինարարության թույլտվություն տվող մարմին՝ շինարարության ժամկետը երկարաձգելու մասին հայտով կամ շինարարության թույլտվությամբ սահմանված նոր ժամկետում չի ավարտում կառուցապատումը, կամ չի օտարում սեփականության իրավունքով իրեն պատկանող օբյեկտը, ապա շինարարության թույլտվություն տվող մարմինը նրան կրկին ենթարկում է վարչական պատասխանատվության և դիմում դատարան տվյալ օբյեկտը վաճառելու հայցով՝ դատարանի սահմանած կարգով և գնով, բայց ոչ պակաս, քան օբյեկտի կադաստրային արժեքի 75 տոկոսի չափով:

127. Կառուցապատողի կողմից սույն կարգի 126-րդ կետում նշված հայտն իրավասու մարմին է ներկայացվում N 5 հավելվածի N 2-1 ձևին համապատասխան:

128. Շինարարության թույլտվության հետ միասին կառուցապատողին է տրվում շինարարության վարման մատյանը՝ դրոշմակնքված իրավասու մարմնի կողմից: Շինարարության վարման մատյանի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը:

129. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, ծանուցում է իրավասու մարմնին, որն իր հերթին՝ եռօրյա ժամկետում դրա մասին իրազեկում է քաղաքաշինական պետական տեսչությանը՝ կցելով սույն կետում նշված ձևաթղթով կառուցապատողի ներկայացրած տեղեկանքի պատճենը:

130. Շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) թույլտվության տրամադրման օրվանից շինարարության տևողության ժամանակահատվածի կեսը (սակայն ոչ պակաս, քան մեկուկես տարին) լրանալու ժամկետում շինարարական աշխատանքներ չսկսելու դեպքում կառուցապատողը պարտավոր է դիմել իրավասու մարմին՝ կառուցապատման և տեխնիկական պայմանների հնարավոր փոփոխությունների մասին լրացուցիչ տվյալներ ստանալու, դրանց փոփոխման արդյունքում լրամշակված նախագծային փաստաթղթերը սահմանված կարգով համաձայնեցնելու և սույն կարգին համապատասխան նոր թույլտվություն ստանալու համար:

131. Շինարարական աշխատանքներ չսկսելու դեպքում, մինչև սույն կարգի 130-րդ կետով սահմանված ժամկետը լրանալը, կառուցապատողի կողմից ներկայացված դիմումի հիման վրա կամ դիմում չներկայացվելու դեպքում, իրավասու մարմնի նախաձեռնությամբ, շինարարության թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում՝ դրա մասին պատշաճ կարգով ծանուցելով կառուցապատողին:

132. N 4 հավելվածով սահմանված միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը կարող է փոխարինվել շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորագրով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի N 775-Ն և 2009 թվականի հուլիսի 2-ի N 777-Ն որոշումներով սահմանված պահանջների ապահովման պայմանով:

133. Կառուցապատողը շինարարության ընթացքում պարտավոր է 5-օրյա ժամկետում իրավասու մարմնին ծանուցել շինարարության թույլտվության և (կամ) N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքի տվյալների փոփոխման մասին (N 5 հավելվածի N 4-5 ձև), որի վերաբերյալ իրավասու մարմնին իր հերթին՝ եռօրյա ժամկետում գրավոր իրազեկում է քաղաքաշինական պետական տեսչությանը՝ կցելով կառուցապատողի ներկայացրած՝ սույն կետում նշված տեղեկանքի պատճենը:

134. Կառուցապատվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքների փոխանցման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն եռօրյա ժամկետում փոփոխության մասին գրավոր տեղեկացնում է իրավասու մարմինն և քաղաքաշինական պետական տեսչությանը: Ընդ որում, սեփականության կամ օգտագործման իրավունքների փոխանցման դեպքում շինարարության թույլտվության գործողությունը և դրանով սահմանված պայմանները պահպանվում են լրիվ ծավալով:

135. Եթե կառուցապատողն աշխատանքների կատարման ընթացքում թույլ է տվել սույն կարգի 129-րդ, 130-րդ և 133-րդ կետերով սահմանված դրույթների խախտում, ապա խախտումը բացահայտվելու պահից շինարարության թույլտվության գործողությունն իրավասու մարմնի որոշմամբ կասեցվում է՝ մինչև կասեցման պատճառների վերացումը, ընդ որում, կասեցումը հիմք չէ շինարարության թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու համար: Շինարարության թույլտվությունը կարող է կասեցվել նաև օրենքով վարչական ակտերի կասեցման համար նախատեսված դեպքերում և կարգով:

136. Առանց շինարարության թույլտվության կատարվում են միայն N 4 հավելվածի N 1 ցանկով (այսուհետ՝ ցանկ) սահմանված ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների շինարարական աշխատանքները: Ցանկում աստղանիշով (\*) նշված՝ շենքերի արտաքին տեսքը փոփոխող ընթացիկ նորոգման, ինչպես նաև ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման աշխատանքների իրականացման համար (եթե բարեկարգման աշխատանքներ իրականացնողն իրավասու մարմինը չէ)՝

1) դիմողը կազմում է էսքիզային նախագիծ և N 5 հավելվածի N 4-1 ձևի դիմումով այն ներկայացնում է իրավասու մարմին.

2) իրավասու մարմինը դիմումն ստանալու օրվանից 5-օրյա ժամկետում տալիս է

համաձայնություն կամ մերժում այն՝ նշելով մերժման հիմքերը.

3) մերժման դեպքում կրկնակի դիմելու և իրավասու մարմնի ներկայացրած պահանջները դիմողի կողմից կատարվելու դեպքում՝ համաձայնության տրամադրման հարցը քննարկվում է ոչ ավելի, քան եռօրյա ժամկետում:

137. Պատմամշակութային հուշարձանների փոփոխմանն առնչվող դեպքերում սույն կարգի 136-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերն իրավասու մարմինը եռօրյա ժամկետում ներկայացնում է պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմին՝ համաձայնեցման, որի՝ Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2338-Ն որոշմամբ սահմանված 19-օրյա ժամկետում իրավասու մարմին ներկայացված կարծիքը հիմք է դիմողին համաձայնություն տալու, դիտողություններով լրամշակման վերադարձնելու կամ մերժելու համար:

VII. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ  
(ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՓԱՍՏԱԳՐՈՒՄԸ)

138. Իրավասու մարմնի կողմից ավարտված շինարարության շահագործման փաստագրումը ձևակերպվում է շահագործման թույլտվությամբ (ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտով)՝ համաձայն N 5 հավելվածի N 3-2 ձևի, հաստատված նախագծով ու համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության հետ կնքված շինարարական կապալի պայմանագրով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվելուց և սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան ավարտված շինարարական օբյեկտը կառուցապատողի կողմից ընդունվելուց հետո:

139. Ավարտված շինարարական օբյեկտի համապատասխանությունը հաստատված նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին հավաստվում է օբյեկտն ընդունող հանձնաժողովի ակտով (այսուհետ՝ ընդունող հանձնաժողովի ակտ)՝ համաձայն N 5 հավելվածի N 3-3 ձևի:

140. Ավարտված շինարարական օբյեկտը հաստատված նախագծին համապատասխան է համարվում նաև ոչ էական շեղումներով կառուցված լինելու դեպքում, որի մասին ընդունող հանձնաժողովի ակտում և ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտում կատարվում են համապատասխան նշումներ: Ոչ էական են համարվում՝

1) յուրաքանչյուր հարկի մակերեսի՝ մինչև 5 տոկոսի չափով շեղումը.

2) կառույցի բարձրության՝ մինչև 1.2 մետր չափով շեղումը.

3) ներքին միջնորմների և այլ ոչ կառուցվածքային տարրերի տեղադիրքի շեղումները՝ սենքերի հարաչափերի նվազագույն նորմերի պահպանման պայմանով:

141. Սույն կարգի 140-րդ կետով սահմանված շեղումները համարվում են ոչ էական՝ հետևյալ պահանջների ապահովման պայմանով՝

1) չեն փոփոխվել հաստատված նախագծային փաստաթղթերով նախատեսված՝

ա. օբյեկտի հարկայնությունը,

բ. օբյեկտի տեղադրման կարմիր և կառուցապատման գծերը,

գ. կառուցապատվող հողամասի սահմանները.

2) օբյեկտի կոնստրուկտիվ տարրերին չառնչվող ճարտարապետական արտահայտչամիջոցների (ճակատների, բարձրաքանդակների, ինտերիերի նկարվածք և այլն, եթե այդ շեղումները չեն հակասում քաղաքաշինական կանոնադրության պահանջներին) փոփոխման դեպքում առկա է նախագծող հեղինակի համաձայնությունը.

3) սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված փոփոխությունները կատարվել են սույն կետի 1-ին ենթակետի պահանջների իրականացման ապահովմամբ:

142. Օբյեկտն ընդունող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կազմում ներգրավվում են կառուցապատողի, կապալառուի, տեխնիկական հսկողություն (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ հեղինակային հսկողություն) իրականացնող անձինք, իրավասու մարմնի, քաղաքաշինական պետական տեսչության, օրենքով համապատասխան վերահսկողական (տեսչական) իրա-

վասություններով օժտված պետական լիազորված շահագրգիռ մարմինների (այսուհետ՝ շահագրգիռ պետական մարմին) և ինժեներական սպասարկման ծառայություններ մատուցող ու տեխնոլոգիական սարքավորումները, ենթակառուցվածքային օբյեկտներն ու ցանցերը շահագործող կազմակերպությունների (այսուհետ՝ մատակարար կազմակերպություններ) ներկայացուցիչները:

143. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ բարձրագույն դիսկալնության աստիճանի (V կատեգորիայի) դասակարգում ունեցող յուրաքանչյուր առանձին օբյեկտի համար շինարարական կապալի պայմանագրով կատարված աշխատանքի արդյունքն ընդունվում է այդ որոշմամբ ստեղծված ժամանակավոր ընդունող հանձնաժողովի կողմից, եթե միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Սույն կետում նշված որոշմամբ կարող են ամրագրվել ավարտված շինարարական օբյեկտն ընդունելու վերաբերյալ սույն կարգը լրացնող հատուկ պահանջներ: Ընդ որում, ժամանակավոր հանձնաժողովում, ի լրումն սույն կարգի 142-րդ կետում նշված մասնակիցների, կարող են ընդգրկվել նաև այլ մարմինների, շահագրգիռ կողմ հանդիսացող այլ երկրների ներկայացուցիչներ, միջազգային փորձագետներ և մասնագետներ:

144. Մատակարար կազմակերպությունները ներգրավվում են հանձնաժողովի կազմում, եթե շահագործման հանձնվող օբյեկտի համար անհրաժեշտ է կնքել համապատասխան ծառայությունների մատուցման մասին պայմանագիր կամ գործող պայմանագրում կատարել փոփոխություն (սույն կարգին համապատասխան՝ տրամադրվել են տեխնիկական պայմաններ): Ընդ որում, մատակարար կազմակերպություններին վերաբերող՝ սույն կարգով սահմանված դրույթները գործում են օրենքով այդ կազմակերպություններին վերապահված իրավասությունների սահմաններում:

145. Շինարարության յուրաքանչյուր փուլում կատարված աշխատանքների (այդ թվում՝ թաքնված), օգտագործվող նյութերի, կառուցվածքների և դրանց մասերի, ինժեներական սարքավորումների և դրանց որակի համապատասխանությունը նախագծային 15\_0596

փաստաթղթերին, տեխնիկական պայմաններին ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին հիմնավորվում է կատարողական փաստաթղթերի (ակտերի) ձևակերպմամբ և շինարարության վարման մատյանում գրանցմամբ: Անհամապատասխանության հայտնաբերման դեպքում կատարողական ակտերը չեն ստորագրվում, և հաջորդական աշխատանքներ չեն կատարվում մինչև հայտնաբերված թերությունների վերացումը:

146. Կատարողական փաստաթղթերի (այսուհետ՝ կատարողական ակտեր) կամ դրանց մի մասի բացակայության դեպքում կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին վերականգնել դրանք՝ իրավասու անձանց կողմից անհրաժեշտ տեխնիկական հետազոտություններ կամ փորձարկումներ կատարելու միջոցով:

147. Կատարողական ակտերի փաթեթը կազմում է կապալառուն՝ շինարարության բոլոր փուլերում տեխնիկական հսկողություն (պայմանագրով նախատեսված դեպքերում նաև հեղինակային հսկողություն) իրականացնող անձանց, ինչպես նաև տվյալ օբյեկտը շահագործող անձի կամ նրա ներկայացուցչի (որպես դիտորդի) մասնակցությամբ: Կատարողական ակտերի կազմն ու ձևերը սահմանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը:

148. Եթե օրենքով և սույն կարգով սահմանված դեպքերում II կատեգորիայի օբյեկտի տեխնիկական հսկողությունը փոխարինվել է շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառու կազմակերպության երաշխավորագրով, ապա տեխնիկական հսկողությանը վերապահված գործառույթներն իրականացնում է շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառու կազմակերպությունը:

149. III, IV և V ռիսկայնության (կատեգորիաների) օբյեկտներ կառուցելու դեպքում շինարարական աշխատանքների կապալառու կազմակերպությունը չի կարող իրականացնել այդ աշխատանքների տեխնիկական հսկողությունը և չի կարող ներգրավվել այդ աշխատանքներում՝ անկախ տեխնիկական հսկողություն իրականացնելու լիցենզիա ունենալու հանգամանքից:

150. Կառուցապատողը շինարարությունն ավարտելուն պես, բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալը 30 օր առաջ, դիմում է իրավասու մարմնին՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) ավարտված շինարարական օբյեկտի վերաբերյալ շահագործման թույլտվություն ստանալու մասին դիմում (N 5 հավելվածի N 3-3 ձև)՝ կցելով սույն կետում նշված դիմումի ձևաթղթով սահմանված տեղեկությունները և (կամ) փաստաթղթերը.

2) ավարտված շինարարական օբյեկտի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և (կամ) սահմանափակումը դադարեցնելու համար՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված և պետական գրանցում իրականացնող մարմնի պաշտոնական կայք էջում տեղադրված՝ պետական գրանցման համար անհրաժեշտ՝ իրավունքների ձեռքբերումը հաստատող փաստաթղթերի ցանկերին համապատասխան՝ ըստ գույքի նկատմամբ իրավունքների ձեռքբերման առանձին հիմքերի՝ իրավահաստատող փաստաթղթերը, այդ թվում՝

ա. անշարժ գույքի պետական ռեգիստրի որևէ սպասարկման գրասենյակ (անկախ գույքի գտնվելու վայրից) հասցեագրված կառուցապատողի դիմումը, նախագծային փաստաթղթերի, նախագծման ու շինարարության թույլտվությունների բնօրինակները և օրենքով սահմանված դեպքերում՝ համապատասխան որակավորման վկայական ունեցող անձի կողմից կառուցապատողի հետ կնքված պայմանագրով կատարված չափագրման (հաշվառման) նյութերը,

բ. օրենքով սահմանված դեպքերում՝ անշարժ գույքի հասցե տրամադրելու մասին իրավասու մարմնի որոշումը,

գ. ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տվյալ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված տեղական վճարի, ինչպես նաև իրավունք-



ների պետական գրանցման համար օրենքով սահմանված պետական տուրքի ու պետական գրանցման համար վճարի մուծման անդորրագրերը:

151. Սույն կարգի 150-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված իրավահաստատող փաստաթղթերի ամբողջականության և իսկության համար պատասխանատվությունը կրում են փաստաթղթերը ներկայացրած կառուցապատողները: Ընդ որում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրավունքների պետական գրանցման վարչարարություն իրականացնելիս, վարչարարության կողմեր են տվյալ կառուցապատողը և գրանցում իրականացնող պետական լիազորված մարմինը, որի առնչությամբ տեղական ինքնակառավարման մարմինները որևէ պատասխանատվություն չեն կրում:

152. Իրավասու մարմինն օբյեկտի շահագործման թույլտվության ձևակերպման նպատակով իր ղեկավարությամբ ձևավորում է հանձնաժողովի կազմը՝ կառուցապատողից շահագործման թույլտվության մասին դիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում հարցում ներկայացնելով սույն կարգի 142-րդ կետով սահմանված անձանց և (կամ) մարմիններ (հաշվի առնելով սույն կարգի 144-րդ, 153-րդ, 154-րդ, 155-րդ, 156-րդ և 161-րդ կետերով սահմանված դրույթները)՝ հանձնաժողովի աշխատանքներում ներգրավվելու մասին (նշելով նաև հանձնաժողովի աշխատանքների սկզբի ժամկետը, օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը և գտնվելու վայրը), որի վերաբերյալ եռօրյա ժամկետում ստանում է համապատասխան ներկայացուցչի թեկնածությունը: Ընդ որում, իրավասու մարմնի կողմից հարցումն ստանալուց հետո եռօրյա ժամկետում համապատասխան ներկայացուցչի թեկնածությունը չներկայացնելու դեպքում հարցումն ստացած անձի, մարմնի կամ կազմակերպության կողմից հանձնաժողովի կազմած ակտը համարվում է ստորագրված, որի վերաբերյալ իրավասու մարմնի ներկայացուցչից հանձնաժողովի կազմած ակտում կատարում է նշում:

153. Իրավասու մարմնի կողմից շահագործման թույլտվություն ստանալու մասին դիմումը մերժվում է միայն սույն կարգի 150-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու կամ շինարարության թույլտվության ժամկետն սպառվելու հիմքերով, ինչպես նաև սույն կարգի 167-րդ և 169-րդ կետերով նախատեսված դեպքերում, որի մասին կառուցապատողին ծանուցվում է եռօրյա ժամկետում՝ նշելով մերժման պատճառները:

154. Պատմամշակութային հուշարձանների ամրակայման, նորոգման ու վերականգնման ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովի կազմում, բացի սույն կարգի 142-րդ կետում նշված անձանցից (ներառյալ պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմնի ներկայացուցիչը), ընդգրկվում են նաև գիտնականագծային ու գիտավերականգնող կազմակերպությունների ներկայացուցիչները:

155. Ընդունող հանձնաժողովում ներգրավված շահագրգիռ պետական մարմինների կազմը տարբերակվում է՝ կախված տվյալ օբյեկտի նշանակությունից և ռիսկայնության աստիճանից, ընդ որում, III ռիսկայնության աստիճանի, սույն որոշման N 4 հավելվածի 1-ին կետի 1-ին և 5-րդ ենթակետերով և 2-րդ կետով սահմանված IV, ինչպես նաև V ռիսկայնության աստիճանի դասակարգում ունեցող օբյեկտների համար պարտադիր է քաղաքաշինական պետական տեսչության, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության ներկայացուցիչների մասնակցությունը:

156. II ռիսկայնության աստիճանի դասակարգում ունեցող ընդունող հանձնաժողովի կազմում ներգրավվում են կառուցապատողի, կապալառուի, իրավասու մարմնի, քաղաքաշինական պետական տեսչության և մատակարար կազմակերպությունների (եթե շահագործման հանձնվող օբյեկտի համար անհրաժեշտ է կնքել համապատասխան ծառայ-

յությունների մատուցման մասին պայմանագիր կամ առկա պայմանագրում կատարել փոփոխություն) ներկայացուցիչները:

157. Բարձր ռիսկայնության աստիճանի դասակարգում ունեցող (IV կատեգորիայի) հատուկ և կարևորագույն օբյեկտների ընդունող հանձնաժողովի աշխատանքներին պետական տեսչական գործառույթներ իրականացնող այլ մարմինների մասնակցությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենսդրական ակտերով այդ մարմիններին վերապահված լիազորություններով՝ կախված կառուցապատվող օբյեկտի նշանակությունից:

158. Սույն կարգի 142-րդ կետում նշված տեսչական մարմիններն իրենց գործառույթներն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող չափանիշների հիման վրա:

159. Շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչները հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են իրենց պաշտոնական պարտականությունների կատարման շրջանակներում և կառուցապատողի կողմից չեն վարձատրվում:

160. Սույն կարգի 150-րդ կետում նշված փաստաթղթերի կազմման և հանձնաժողովի աշխատանքի հետ կապված այլ հնարավոր ծախսերը (տրանսպորտ, գործուղում, պատճենահանում և այլն) կատարվում են կառուցապատողի կողմից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

161. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի (այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային, եթե միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ կառուցվող օբյեկտների դեպքում՝ կառուցապատողի գործառույթներն ստանձնում է ծրագիրն իրականացնող պետական հիմնարկը՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

162. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կառուցվող շինարարական օբյեկտներն ընդունող հանձնաժողովների կազմում լրացուցիչ ընդգրկվում են նաև՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներկայացուցիչը (գնումների բազային միավորի 250-ապատիկը գերազանցող դեպքերում)։

2) համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչը։

163. Հանձնաժողովն իր աշխատանքն սկսում է սույն կարգի 150-րդ կետով սահմանված դիմումն ստանալու օրվանից 7-օրյա ժամկետում։

164. Հանձնաժողովի անդամները, յուրաքանչյուրն իր իրավասությունների մասով, հավաստում են ավարտված շինարարական օբյեկտի համապատասխանությունը նախագծային և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, այդ թվում՝ ըստ անհրաժեշտության, կառուցապատողի մոտ ուսումնասիրում է շինարարության վարման մատյանը և կատարողական ակտերը, փորձարկում ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, հեռահաղորդակցության համակարգերի, տեխնոլոգիական սարքավորումների աշխատանքը և, առարկություն չունենալու դեպքում, ստորագրում է հանձնաժողովի ակտը՝ հետևյալ ժամկետներում՝

1) միջին ռիսկայնության աստիճանի օբյեկտների համար՝ II կատեգորիա՝ 7 օր.

2) միջինից բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտների համար՝ III կատեգորիա՝ 10 օր.

3) բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտների համար՝ IV կատեգորիա՝ 15 օր.

4) բարձրագույն ռիսկայնության աստիճանի օբյեկտների համար՝ V կատեգորիա՝

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում։

165. Հանձնաժողովի կազմած ակտը պետք է ստորագրված լինի հանձնաժողովի բոլոր անդամների կողմից, որոնցից յուրաքանչյուրն իր իրավասության սահմաններում պատասխանատվություն է կրում հանձնաժողովի կողմից ընդունված որոշման համար՝

15\_0596

օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, նշված ժամկետներում հանձնաժողովի անդամի կողմից ակտը չստորագրվելու և սույն կարգի 166-րդ կետով նախատեսված գրավոր դիտողություն չներկայացվելու կամ թերությունների վերացումից հետո 168-րդ կետում նշված ժամկետում ակտը չստորագրվելու դեպքերում՝ հանձնաժողովի կազմած ակտը համապատասխան անդամի կողմից համարվում է ստորագրված, որի վերաբերյալ իրավասու մարմնի ներկայացուցիչը հանձնաժողովի կազմած ակտում կատարում է նշում:

166. Հանձնաժողովի անդամն ակտը չստորագրելու դեպքում հանձնաժողովի նախագահին է գրավոր ներկայացնում է իր իրավասության սահմաններում արված դիտողությունները՝ նշելով արձանագրված թերությունները և դրանք վերացնելու ժամկետները, որոնք ամփոփվում են հանձնաժողովի նախագահի կողմից և եռօրյա ժամկետում հանձնվում կառուցապատողին: Ընդ որում, թերությունների վերացման համար կառուցապատողին առաջարկված վերջնաժամկետի չափով շինարարության թույլտվության ժամկետը համարվում է երկարաձգված:

167. Նշված թերությունները պետք է վերացվեն կապալի պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն կարգի 166-րդ կետով սահմանված ժամկետում, այլապես ավարտված օբյեկտը հանձնաժողովի կողմից չի ընդունվում: Արձանագրված թերությունները չվերացնելը հանգեցնում է շինարարության թույլտվությանը սահմանված ժամկետում կառուցապատումը չավարտելու համար օրենքով նախատեսված հետևանքների:

168. Թերությունները վերացնելուց հետո (դրանց առկայության դեպքում) կառուցապատողը դրա մասին տեղեկացնում է իրավասու մարմնին (N 5 հավելվածի N 4-6 ձև), որը եռօրյա ժամկետում հրավիրում է թերություններ արձանագրած հանձնաժողովի անդամին (անդամներին)՝ ավարտված շինարարության ընդունման հանձնաժողովի ակտն ստորագրելու համար:

169. Հանձնաժողովի բոլոր անդամների (այդ թվում՝ հանձնաժողովի նախագահի) կողմից ստորագրված ընդունող հանձնաժողովի ակտի հիման վրա իրավասու մարմինը եռօրյա ժամկետում ձևակերպում է շահագործման թույլտվությունը՝ համաձայն N 5 հավելվածի N 3-2 ձևի, դրա մասին ծանուցելով կառուցապատողին: Այն դեպքում, եթե հանձնաժողովի որևէ անդամ (անդամներ) դիտողություններ ունենալու հիմքով չի ստորագրում ընդունող հանձնաժողովի ակտը, ապա իրավասու մարմինը մերժում է շահագործման թույլտվության ձևակերպումը, որի մասին եռօրյա ժամկետում ծանուցում է կառուցապատողին: Ընդ որում, ընդունող հանձնաժողովի ակտը չստորագրած՝ սույն կարգի 144-րդ կետում նշված համապատասխան անձը (անձինք) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի VII բաժնով նախատեսված վարչարարությամբ լրիվ ծավալով պատասխանատվություն է կրում շահագործման թույլտվությունը չձևակերպելու հետևանքով պատճառված վնասի համար:

170. Շահագործման թույլտվությունը կազմվում է 4 օրինակից, որոնցից մեկը մնում է իրավասու մարմնի մոտ, մեկական օրինակ եռօրյա ժամկետում տրվում է կառուցապատողին, կապալառուին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային մարմնին:

171. Պատմամշակութային հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների դեպքում սույն կարգի 170-րդ կետում նշված փաստաթղթերի լրացուցիչ՝ 5-րդ օրինակը հանձնվում է պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված կարգի 96-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան:

172. Իրավասու մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային մարմնին տրամադրվող շահագործման թույլտվությանը կցվում են նաև սույն կարգի 150-րդ կետում

նշված՝ ավարտված շինարարական օբյեկտի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և (կամ) օբյեկտի շահագործման սահմանափակումը դադարեցնելու համար՝ կառուցապատողի կողմից ներկայացված փաստաթղթերը:

173. Իրավասու մարմինը շահագործման թույլտվությունը ձևակերպելուց հետո եռօրյա ժամկետում դրա մասին ծանուցում է համապատասխան մարզպետին (բացառությամբ Երևան քաղաքի) և քաղաքաշինական պետական տեսչությանը՝ կցելով շահագործման թույլտվության պատճենը:

174. Կառուցապատողի ցանկությամբ քաղաքաշինական համալիրի կազմում ընդգրկված առանձին շենքերի և շինությունների շահագործման ընդունումը կարող է ձևակերպվել՝ ըստ դրանց շինարարության ավարտի:

175. Ձմռան ամիսներին ձևակերպվող շահագործման ակտով կարող է նախատեսվել շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքները մոտակա գարնանային-ամառային ամիսներին իրականացնելու վերաբերյալ պայման: Այդ աշխատանքներն ավարտվում են շահագործման ակտով սահմանված ժամկետում և ընդունվում կառուցապատողի կողմից՝ իրավասու մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ, համապատասխան նշում կատարելով շահագործման թույլտվության մեջ: Սույն կետում նշված աշխատանքները սահմանված ժամկետում չավարտելը հանգեցնում է շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում կառուցապատումը չավարտելու համար օրենքով նախատեսված հետևանքների:

176. Շինարարական կապալի պայմանագրով կարող է նախատեսվել անհատական բնակելի տների և դրանց կից տնտեսական շինությունների, ինչպես նաև առևտրային իրացման նպատակով կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի, այդ թվում՝ ներկառուցված ոչ բնակելի տարածքներով, շինարարական աշխատանքների ոչ լրիվ իրականացումը, որի դեպքում շահագործման թույլտվությունը ձևակերպվելուց հետո շինարարության թույլտվություն չպահանջող ներքին հարդարման աշխատանքները (N 4 հա-15\_0596

վելվածի N 1 ցանկ) կարող են կատարվել նոր սեփականատիրոջ կողմից, ընդ որում, բազմաբնակարան (կամ բազմաֆունկցիոնալ) բնակելի շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների շինարարական աշխատանքները, փոստային բաժանորդային պահարանների տեղադրումն ու ինժեներատեխնոլոգիական սարքավորումների մոնտաժման և գործարկման աշխատանքները պետք է պարտադիր իրականացվեն ամբողջությամբ:

177. Ավարտված շինարարական օբյեկտը շահագործվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհետ՝ քաղաքաշինական փաստաթղթեր) փորձաքննության իրականացման (այսուհետ՝ փորձաքննություն) հետ կապված հարաբերությունները:

2. Փորձաքննության հիմնական նպատակն ընտրված նախագծային լուծումների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանության ապահովումն է:

3. Քաղաքաշինական փաստաթղթերը, մինչև դրանց՝ սահմանված կարգով համաձայնեցումն ու հաստատումը, ենթակա են փորձաքննության: Բացառություն են կազմում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 4 հավելվածի (այսուհետ՝ N 4 հավելված) NN 1 և 2 ցանկերով սահմանված՝ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) և միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերը:

4. Միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը կարող է փոխարինվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին նախագծի համապատասխանության վերաբերյալ նախագիծը

թողարկող աշխատանքների պատասխանատու կապալառուի գրավոր երաշխավորագրով, եթե նման պայման նախատեսված է կապալի պայմանագրով:

5. Փորձաքննություն կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության գործունեության լիցենզիա ունեցող անձինք (այսուհետ՝ փորձագիտական մարմին), ինչպես նաև բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտի հատուկ համալիր փորձաքննության իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծված ժամանակավոր փորձաքննական հանձնաժողովը:

6. Քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը մասնակցած նախագծային կազմակերպությունները կամ անձինք չեն կարող կատարել կամ ներգրավվել իրենց կողմից մշակված նախագծերի փորձաքննության աշխատանքներում:

7. Քաղաքաշինական փաստաթղթերը փորձաքննության են ներկայացվում կառուցապատողի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից, ինչպես նաև նախագիծը թողարկող աշխատանքների պատասխանատու կապալառուի կողմից (այսուհետ՝ պատվիրատու), եթե այդպիսի պայման նախատեսված է նախագծային կապալի պայմանագրով:

8. Փորձաքննությունն անցկացվում է պատվիրատուի և փորձագիտական մարմնի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

9. Ելնելով քաղաքաշինական փաստաթղթերի նշանակությունից, ինչպես նաև դրանցով իրականացվող քաղաքաշինական օբյեկտների բարդությունից՝ իրականացվում են փորձաքննության հետևյալ տեսակները՝

1) պարզ փորձաքննություն՝ միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների մասով.

2) համալիր փորձաքննություն՝ բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների մասով.

3) հատուկ համալիր փորձաքննություն՝ բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների մասով:

10. Նախագծային փաստաթղթերի պարզ փորձաքննությունն իրականացվում է քաղաքաշինական օբյեկտի ճարտարապետաշինարարական և արտաքին ու ներքին ինժեներական համակարգերի հուսալիության, կայունության, անվտանգության, ինչպես նաև մարդկանց առողջության ապահովմանն ուղղված Հայաստանի Հանրապետության օրենսդրական և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին՝ նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը հավաստելու համար բավարար ծավալով:

11. Նախագիծը թողարկող աշխատանքների պատասխանատու կապալառուի գրավոր երաշխավորագիրը պետք է պարունակի սույն կարգի 10-րդ կետով սահմանված պարտադիր պահանջներին՝ նախագծային փաստաթղթերի համապատասխանությունն ապահովող բավարար երաշխիքներ:

12. Բազմակի (կրկնակի) կիրառման օրինակելի նախագծերի և սերտիֆիկացված նախագծերի կիրառման դեպքում փորձաքննության են ենթակա միայն օբյեկտի գրոյակայն նիշից ներքև տեղակայված կառուցվածքների նախագծային փաստաթղթերը (տեղակայման նախագծերը): Ընդ որում, II կատեգորիայի դասակարգում ունեցող՝ սույն կետում նշված օբյեկտների տեղակայման նախագծերի փորձաքննությունը ևս կարող է փոխարինվել երաշխավորագրով:

13. Համալիր փորձաքննության ենթակա են այն քաղաքաշինական նախագծային փաստաթղթերը, որոնցով, բացի քաղաքաշինական նորմերին համապատասխանության անհրաժեշտությունից, օրենքով պահանջվում է նաև շրջակա միջավայրի, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, արտակարգ իրավիճակների (հրդեհներ, պայթյուններ, փլուզումներ և այլն) կանխարգելման, կապի համակարգերի, տրանսպորտային, էներգետիկ ու ինժեներական այլ ենթակառուցվածքների, արդյունաբերական անվտանգության, ընդերքի արդյունավետ օգտագործման, տեխնոլոգիական, սանիտա-  
15\_0596

րահիզիենիկ պահանջների ապահովման վերաբերյալ համապատասխան ոլորտին առնչվող փորձագիտական կամ մասնագիտական եզրակացության կամ համաձայնեցման տրամադրում:

14. Համալիր փորձաքննությունն իրականացվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապատասխան փորձագիտական և (կամ) սույն կարգի 13-րդ կետում նշված համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ պետական մարմինների (այսուհետ՝ շահագրգիռ մարմիններ) մասնակցությամբ:

15. N 4 հավելվածի հատուկ նշանակության օբյեկտների N 3 ցանկում ներառված պատմության և մշակույթի հուշարձան հանդիսացող կառույցների կամ պատմամշակութային հուշարձանի պահպանական գոտում կառուցվող օբյեկտների համար պարտադիր է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության ու օգտագործման բնագավառներում կառավարումն իրականացնող լիազորված մարմնի մասնագիտական եզրակացությունը:

16. Համալիր փորձաքննության ենթակա են՝

- 1) քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերը.
- 2) նոր տեխնոլոգիաների կիրառմամբ փորձարարական օբյեկտների նախագծային փաստաթղթերը.

3) N 4 հավելվածի N 3 ցանկով սահմանված բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող կարևորագույն (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի կարևոր) նշանակություն ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերը:

17. Պատվիրատուի նախաձեռնությամբ՝ համալիր փորձաքննության կարող են ենթարկվել նաև ավելի ցածր ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերը՝ փորձագիտական մարմնի և պատվիրատուի միջև կնքվող պայմանագրում այդպիսի պայման նախատեսվելու դեպքում:

18. Համալիր փորձաքննություն իրականացնելիս՝ փորձագիտական մարմինը նախապատրաստում է փորձաքննական եզրակացություն՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, ինչպես նաև սույն կարգի 20-րդ կետում նշված այլ շահագրգիռ մարմինների դրական եզրակացությունները:

19. Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերը համալիր փորձաքննության են ներկայացվում նախագծվող տարածքի սեյսմաշրջանացման կամ սեյսմամիկրոշրջանացման (կախված տարածական պլանավորման փաստաթղթի մասշտաբից)՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի լիազոր մարմնի կողմից հաստատված քարտեզների ներառմամբ:

20. Պատվիրատուի նախաձեռնությամբ քաղաքաշինական փաստաթղթերի համալիր փորձաքննության իրականացման նպատակով կարող են ստեղծվել միջգերատեսչական փորձագիտական հանձնաժողովներ (այսուհետ՝ հանձնաժողով)՝ քաղաքաշինական փաստաթղթերի փորձագիտական մարմնի և այլ շահագրգիռ մարմինների ներգրավմամբ:

21. Հանձնաժողով կարող է ստեղծվել նաև համալիր փորձաքննություն իրականացնող և շահագրգիռ փորձագիտական մարմինների կողմից՝ փոխադարձ համաձայնությամբ (համաձայնեցնելով պատվիրատուի հետ): Եթե այդպիսի հանձնաժողով չի ստեղծվում, ապա շահագրգիռ մարմինները, ըստ համապատասխան բնագավառների, իրենց եզրակացությունները տրամադրում են պատվիրատուին, որը դրանք ներառում է սույն կարգի 31-րդ կետով սահմանված փաստաթղթերի կազմում՝ վերջիններիս կազմին և բովանդակությանը՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

22. Պատվիրատուի կողմից քաղաքաշինական փաստաթղթերը համալիր փորձաքննության են ներկայացվում նախագծման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և սույն կարգով նախատեսված լրիվ ծավալով:

23. Պետական և համայնքի բյուջեների (ներառյալ՝ վարկային և դրամաշնորհային միջոցները) հաշվին կամ դրանց ներգրավմամբ իրականացվող ճարտարապետաշինարարական օբյեկտների նախագծերը փորձաքննության են ներկայացվում նախահաշվային փաստաթղթերի ներառմամբ: Մնացած դեպքերում նախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են պատվիրատուի որոշմամբ:

24. Հատուկ համալիր փորձաքննության ենթակա են հատկապես վտանգավոր և (կամ) տեխնիկապես բարդ օբյեկտների, ինչպես նաև երկու և ավելի պետությունների շահերին առնչվող բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) դասակարգում ունեցող քաղաքաշինական օբյեկտների նախագծային փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացվում ծրագիրն իրականացնող համապատասխան ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից՝ կախված տվյալ օբյեկտի գործառնական նշանակությունից (էներգետիկա, տրանսպորտ, ջրային համակարգեր և այլն): Յուրաքանչյուր առանձին դեպքում տվյալ օբյեկտի փորձաքննությունն անցկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծված ժամանակավոր փորձաքննական հանձնաժողովը, եթե միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ժամանակավոր փորձաքննական հանձնաժողովի կազմում պարտադիր ընդգրկվում է (ընդգրկվում են) քաղաքաշինության տվյալ բնագավառում փորձաքննության գործունեության լիցենզիա ունեցող անձը (անձինք), շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնող և այլ շահագրգիռ մարմինները: Հայաստանի Հանրա-

15\_0596

պետության կառավարության որոշմամբ ժամանակավոր փորձաքննական հանձնաժողովի կազմում կարող են ներառվել նաև խնդրին առնչվող այլ մարմիններ և կազմակերպություններ: Հատուկ համալիր փորձաքննությունը կարող է իրականացվել նաև միջազգային փորձագիտական մարմինների (կամ փորձագետների) ներգրավմամբ: Սույն կետում նշված լիազորված մարմինը ժամանակավոր փորձաքննական հանձնաժողովի ամփոփ եզրակացությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ քննարկման:

25. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը երկու փուլով («Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր») մշակելու դեպքում փորձաքննության է ներկայացվում համաձայնեցման ենթակա՝ «Նախագիծ» փուլը, որի վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը տրամադրվում է սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

26. Հաստատված «Նախագիծ» փուլին հաջորդող՝ «Աշխատանքային փաստաթղթեր» փուլի նախագծային փաստաթղթերի մշակումը՝ հատուկ համալիր և համալիր փորձաքննության ենթակա օբյեկտների համար, պատվիրատուի նախաձեռնությամբ, կարող է զուգորդվել փորձագիտական ուղեկցմամբ:

27. Փորձագիտական ուղեկցումը կիրառվում է «Նախագիծ» փուլով համաձայնեցված լուծումներին հաջորդող աշխատանքային փաստաթղթերի համապատասխանությունը փորձագիտական մարմնի կողմից հավաստելու նպատակով: Այս դեպքում փորձագիտական մարմնի հետ կնքվող պայմանագրով սահմանված ժամկետներում և պայմաններով վերջինիս կողմից պատվիրատուին ներկայացված դիտողություններն ու առաջարկություններն ընդգրկվում են սույն կարգի 28-րդ կետում նշված՝ աշխատանքային փաստաթղթերի մշակման փուլերում:

28. Սույն կարգի 27-րդ կետով սահմանված դեպքերում աշխատանքային փաստաթղթերի համապատասխանությունը համաձայնեցված «Նախագիծ» փուլով ընդունված լուծումներին հավաստվում է փորձագիտական մարմնի տեղեկանք-երաշխավորագրերով՝ շինարարության թույլտվությամբ սահմանված աշխատանքների իրականացման հաջորդականությամբ (նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքներ և այլն), որոնք ներառվում են կատարողական փաստաթղթերի փաթեթում:

29. Եթե սույն կարգի 25-րդ կետում նշված դեպքերում փորձագիտական ուղեկցում չի իրականացվում, ապա «Աշխատանքային փաստաթղթեր» փուլի՝ համաձայնեցված «Նախագիծ» փուլով ընդունված լուծումներին համապատասխանությունը երաշխավորում է նախագիծը թողարկող աշխատանքների պատասխանատու կապալառուն, եթե նախագծային կապալի պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

30. Պատվիրատուի կողմից քաղաքաշինական փաստաթղթերը փորձաքննության են ներկայացվում մեկ օրինակից:

31. Մշակված քաղաքաշինական փաստաթղթերի հետ միասին ներկայացվում են նախագծման համար հինք հանդիսացող ելակետային փաստաթղթերն ու օբյեկտի նախագծման տեխնիկական պայմանները, ինչպես նաև շենքի (կառույցի) տեխնիկական, կոնստրուկտիվ լուծումների հիմնավորման հաշվարկները, իսկ սույն կարգի 21-րդ կետում նշված դեպքերում՝ նաև սույն կարգի 13-րդ կետում նշված շահագրգիռ պետական մարմինների փորձագիտական և (կամ) մասնագիտական եզրակացությունները կամ համաձայնությունները:

32. Հիդրոտեխնիկական կառուցվածքների շինարարական և վերակառուցման նախագծային փաստաթղթերի հետ միասին ներկայացվում են հիդրավլիկական մոդելային հետազոտությունների արդյունքները կամ այդպիսի հետազոտությունների՝ ավելորդ լինելու մասին հիմնավորումները:



33. Փորձաքննության ներկայացվող փաստաթղթերի կազմում ներառվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 4-ի N 1530-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգին համապատասխան կատարված ինժեներատեխնիկական հետազննությունների նյութերի փորձաքննության եզրակացությունը՝ հետևյալ քաղաքաշինական փաստաթղթերի համար՝

1) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերից՝ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերը.

2) ինժեներապաշտպան միջոցառումների նախագծային փաստաթղթերը (հակասողանքային, հակափլվածքային, հակասելավային, հակաէրոզիոն, հակաթափվածքային, հականստվածքային, մակերևութային և ստորգետնյա ջրահեռացման, ափապաշտպան ու լանջապաշտպան, հակասուֆոզիոն, աղակալված և նստվածքային գրունտների խտացում ու ամրացում).

3) բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) դասակարգում ունեցող՝ հատուկ համալիր փորձաքննության ենթակա օբյեկտների նախագծային փաստաթղթերը, եթե այդպիսի պայման սահմանված է ժամանակավոր փորձաքննական հանձնաժողով ստեղծելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ.

4) N 4 հավելվածով սահմանված N 3 ցանկում ներառված՝ կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերը: Ընդ որում, նշված օբյեկտների նախագծերի համար՝ տվյալ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի հաստատումից հետո ինժեներատեխնիկական հետազննությունների նյութերի առանձին փորձաքննություն չի իրականացվում (բացառությամբ առաջին կարգի դիմհարային հիդրոտեխնիկական կառուցվածքների):

34. Սույն կարգի 33-րդ կետում չներառված օբյեկտների ճարտարապետաշինարարական նախագծերի դեպքում՝ տվյալ օբյեկտի համար կատարված ինժեներատեխնիկական

նական հետազննությունների նյութերը դիտարկվում են փորձաքննության ներկայացված նախագծային կամ նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի կազմում:

35. Մինչև պայմանագրի կնքումը փորձագիտական մարմինը պարտավոր է ստուգել ներկայացվող քաղաքաշինական փաստաթղթերի փաթեթի կազմն ու ծավալը և սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխանության դեպքում կնքել պայմանագիրը: Անհամապատասխանության դեպքում փաստաթղթերը վերադարձվում են պատվիրատուին՝ առաջարկելով անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել եռօրյա ժամկետում:

36. Փորձագիտական եզրակացությամբ ներկայացված դիտողությունների համաձայն լրամշակված նախագծային փաստաթղթերի կրկնակի փորձաքննության անցկացման ժամկետները սահմանվում են պայմանագրով՝ հաշվի առնելով աշխատանքի ծավալն ու աշխատատարությունը:

37. Փորձաքննության սկզբի ժամկետ է համարվում փորձաքննության մասին պայմանագրի ստորագրման ամսաթիվը, իսկ փորձաքննության ավարտի ժամկետ՝ փորձագիտական եզրակացությունը փորձագիտական մարմնի կողմից ստորագրվելու օրը:

38. Փորձաքննության ծառայությունների արժեքը, փորձաքննության անցկացման ժամկետների խախտման համար պատվիրատուի և փորձաքննություն իրականացնողի փոխադարձ պարտավորությունները սահմանվում են պայմանագրով:

39. Հատուկ համալիր փորձաքննության իրականացման ժամկետները և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ յուրաքանչյուր առանձին դեպքի համար:

40. Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմվում է փորձագիտական եզրակացություն:

41. Փորձագիտական եզրակացությունը պետք է ներառի՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը և դրանց հա-

մառոտ բնութագիրը.

2) ելակետային փաստաթղթերին և օբյեկտի նախագծման տեխնիկական պայմաններին նախագծային լուծումների համապատասխանության վերաբերյալ կատարված եզրահանգումները.

3) հիմնական նախագծային լուծումների (սույն կարգի 23-րդ կետով սահմանված դեպքերում՝ նաև նախահաշվային փաստաթղթերի) վերլուծության արդյունքները, համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները.

4) ընդունված նախագծային լուծումների վերաբերյալ դիտողությունները և առաջարկությունները, նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականները, առաջարկվող ճշտումների հիմնավորումները՝ պարտադիր հղում կատարելով այն նորմին, որի խախտումն արձանագրվել է.

5) փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով կատարված հիմնական փոփոխությունները և լրացումները.

6) քաղաքաշինական փաստաթուղթը երաշխավորելու կամ այն լրամշակման վերադարձնելու կամ այն մերժելու մասին որոշման հիմնավորումները: Փորձագիտական մարմնի դիտողություններն ու առաջարկությունները կարող են ներկայացվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների ապահովման մասով:

42. Փորձագիտական եզրակացությունը կարող է եզրափակվել հետևյալ սահմանումներից մեկով՝

1) «Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին» (փորձագիտական դրական եզրակացություն), որից հետևում է, որ նախագիծը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատվել: Եթե փորձաքննության ընթացքում հայտնաբերվել է 15\_0596

ված բացթողումների ու սխալների ուղղումը չի ենթադրում հիմնական նախագծային լուծումների փոփոխում, ապա նախագիծը ճշտվում և լրացվում է աշխատանքային կարգով, որից հետո տրվում է վերջնական փորձագիտական եզրակացությունը: Այդ դեպքում նախագիծը կրկնակի փորձաքննության չի ներկայացվում:

2) «Նախագիծը վերադարձվում է լրամշակման», որից հետևում է, որ նախագիծը ենթակա է լրամշակման՝ ըստ եզրակացությունում ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, որից հետո ճշտված և լրամշակված նախագծային փաստաթղթերի մասով այն պետք է պատվիրատուի կողմից ներկայացվի կրկնակի փորձաքննության: Լրամշակված նախագծի կրկնակի փորձաքննության համար ներկայացվում են փորձաքննության վերաբերյալ արված դիտողությունների հիման վրա փոփոխված նախագծային նյութերի մասին բացատրագիրը՝ անհրաժեշտ հիմնավորումներով, նախորդ դիտարկումից հետո փոփոխված և լրացված նախագծային փաստաթղթերը:

3) «Նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին», որից հետևում է, որ տվյալ նախագիծը ենթակա է հիմնավոր վերամշակման և պետք է փորձաքննության ներկայացվի որպես նոր նախագիծ:

43. Փորձագիտական դրական եզրակացությունը չի կարող պարունակել նախագծային լուծումների վերաբերյալ դիտողություններ, առաջարկություններ կամ նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականներ:

44. Փորձագիտական եզրակացությունը հաստատվում է փորձագիտական մարմնի ղեկավարի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 - Ն որոշման N 1 հավելվածի 11-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան, և ուղարկվում է պատվիրատուին:

45. Փորձագիտական դրական եզրակացության կամ երաշխավորագրի գործողության ժամկետը երեք տարի է, որը լրանալուն պես տվյալ եզրակացությունը (երաշխավորագիրը) համարվում է ուժը կորցրած:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Էլեկտրոնային քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման համակարգի (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) կիրառմամբ կառուցապատման թույլտվությունների ստացման գործընթացն իրականացվում է կառուցապատողի (հայտատուի) հայեցողությամբ՝ թույլտվություն տրամադրող մարմնի (այսուհետ՝ իրավասու մարմին) «Մեկ պատուհանի» ծառայության (այսուհետ՝ էլեկտրոնային ընդունարան) միասնական վեբ-կայքի միջոցով:

2. Էլեկտրոնային համակարգի ավտոմատացման միջոցառումներն իրականացվում են երեք հիմնական ուղղությամբ՝

1) գործառույթների ներքին ավտոմատացում (այսուհետ՝ կորպորատիվ ցանց).

2) կորպորատիվ ցանցի միացումն այն ցանցերին (մատակարար կազմակերպություններ, պետական լիազորված և այլ շահագրգիռ մարմիններ), որոնց տվյալներն անհրաժեշտ են կառուցապատման թույլտվությունների տրամադրման համար (այսուհետ՝ ինստիտուցիոնալ ցանց).

3) արտաքին ցանցի միջոցով հայտատուներին առցանց (on-line) ծառայությունների մատուցման համար (օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների էլեկտրոնային վճարման հնարավորության ապահովմամբ):

3. Արտաքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է ինստիտուցիոնալ ցանցի միջոցով, իսկ ներքին փաստաթղթաշրջանառությունը՝ կորպորատիվ ցանցի միջոցով:

ցով՝ կառուցապատողի կողմից ներկայացված հայտը (դիմումը) (կից փաստաթղթերով) ուղղելով գործառույթի կատարման լիազորություն ունեցող իրավասու մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը:

4. Էլեկտրոնային ընդունարանը կառուցապատող - իրավասու մարմին շղթայի միջանկյալ օղակն է, որի գործառույթները սահմանափակվում են կառուցապատողից դիմումներ (կից փաստաթղթերով) ընդունելու (համակարգում գրանցման համար (N) տրամադրելու և անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն մատուցելու), իսկ գործընթացի ավարտից հետո՝ կառուցապատողին ծանուցելու և համապատասխան փաստաթղթերը նրան հանձնելու պարտականություններով:

5. Էլեկտրոնային համակարգի միջոցով կառուցապատման թույլտվությունների (այդ թվում՝ նախագծման թույլտվություն կամ ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն), շինարարության (քանդման) թույլտվություն, ավարտված շինարարության շահագործման փաստագրում կամ շահագործման թույլտվություն) տրամադրման ընթացակարգերն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 - Ն որոշման N 1 հավելվածով (այսուհետ՝ N 1 հավելված) սահմանված հաջորդականությամբ, պայմաններով և ժամկետներում:

6. Էլեկտրոնային համակարգի միջոցով կառուցապատման թույլտվություններ ստանալու համար կառուցապատողն իրավասու մարմնի էլեկտրոնային ընդունարանում կարող է գրանցվել սույն կարգի 5-րդ կետում նշված գործառույթների իրականացման առաջին կամ յուրաքանչյուր հաջորդական փուլում, ընդ որում, գրանցման համարը կառուցապատողի համար իր կողմից ներկայացված հայտի (դիմումի) հետագա շարժի մասին հավաստի տեղեկություններ ստանալու միջոց է՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը դրա իրականացման ամբողջ ընթացքում:

7. Էլեկտրոնային համակարգի միջոցով կառուցապատման համապատասխան թույլտվություն (նախագծման կամ շինարարության (քանդման), կամ շահագործման թույլտվություն) ստանալու համար կառուցապատողը գրանցվում է իրավասու մարմնի էլեկտրո-

նային ընդունարանի վեր-կայքում՝ նշելով իր էլեկտրոնային հասցեն ու հեռախոսահամարը, ստանում գրանցման համարը (կամ օգտագործում նախապես ստացված գրանցման համարը) և ներկայացնում լրացված և իր էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված՝ N 1 հավելվածով սահմանված համապատասխան էլեկտրոնային հայտը (ղիմուճ) և պահանջվող փաստաթղթերը կամ ստորագրված հայտի ու նշված փաստաթղթերի տեսաներածված պատճենները:

8. Իրավասու մարմնի կողմից մատակարար կազմակերպություններին, պետական լիազորված և այլ մարմիններին N 1 հավելվածով սահմանված դեպքերում և ժամկետներում ներկայացվող հարցումները, ինչպես նաև վերջիններիս հետ հետադարձ կապն ապահովվում է էլեկտրոնային հաղորդակցության ինստիտուցիոնալ ցանցի միջոցով:

9. Էլեկտրոնային համակարգի միջոցով կառուցապատման համապատասխան թույլտվության ստացման կամ վերջինիս մերժման մասին (նշելով մերժման պատճառները) կառուցապատողը ծանուցվում է հայտում նշված էլեկտրոնային հասցեով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նշված հեռախոսահամարի (կամ՝ հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն (sms) ուղարկելու) միջոցով, ընդ որում, հայտը (ղիմուճ) կարող է մերժվել միայն N 1 հավելվածով սահմանված հիմքերով:

10. Կառուցապատման համապատասխան թույլտվությունը պատրաստ լինելուն պես՝ իրավասու մարմինը սույն կարգի 9-րդ կետում նշված ծանուցմամբ կառուցապատողին տեղեկացնում է նաև՝ իր կողմից ներկայացված տեսաներածված փաստաթղթերի հավաստիությունն ուսումնասիրելու անհրաժեշտության մասին:

11. Ծանուցումն ստանալուց հետո հինգ օրը չգերազանցող ժամկետում կառուցապատողը սույն կարգի 7-րդ կետում նշված փաստաթղթերի բնօրինակները և, օրենքով սահմանված դեպքերում, տեղական տուրքերի ու վճարների էլեկտրոնային վճարման անդորրագիրը ներկայացնում է իրավասու մարմին, որը՝ սույն օրը նշված փաստաթղթերի



բնօրինակները դրանց տեսաներածված պատճենների հետ համեմատելուց և վերջիններիս պատշաճ լինելու հանգամանքը հավաստելուց հետո՝ սահմանված կարգով կազմված ու իր կողմից կնքված կառուցապատման համապատասխան թույլտվությունը ելքագրում և դրա կնիքով հաստատված թղթային օրինակը տրամադրում է կառուցապատողին:

12. Անհամապատասխանության հայտնաբերման կամ սույն կարգի 11-րդ կետում նշված ժամկետի գերազանցման դեպքում իրավասու մարմնի կողմից տրված կառուցապատման թույլտվությունը չեղյալ է ճանաչվում, ինչի մասին կառուցապատողը ծանուցվում է սույն կարգի 9-րդ կետով սահմանված կարգով՝ նշելով կառուցապատման թույլտվությունը չեղյալ ճանաչվելու հիմքերը:

13. Կառուցապատողը կեղծ տվյալներ ներկայացնելու դեպքում կրում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

14. Հայտին կցվող փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են կառուցապատողին, եթե N 1 հավելվածով այլ բան նախատեսված չէ:

15. Իրավասու մարմնի կողմից N 1 հավելվածի 172-րդ կետով սահմանված շահագործման թույլտվությունը և դրան կից ներկայացվող փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային մարմնին են տրամադրվում (ներբեռնվում) «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ